Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

S — 44

4526

491.99-8
S-44

2010

R. Stoffhofer

Sp 2002

178
491.99-8
Ա-44

ՔԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ԵՒ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ՄԱՆԿԱՆՑ

յօրինեաց

ԾԽԱԿԱՆ ԳՈՐՈՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆՑ

Գ. Ա. ՄՏՍԻԿԵԱՆ
ԱՌՈՒՆՉԱՎԱՆ ԱՆՎԱՆ

Տասն առաջին

ՔԱՅՐԵՆԱՐԱՆ

ՏՓԽԻՍ

ՀԱՄԲ. ԷՆՅԻՄԱՇԵՆՑԻ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏՊԱՐԱՆՈՒՄԸ։

1870

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տեառն Տեառն ԳԷՈՐԳԱՅ սրբազնագոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարքի համազգական Յախտամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Կաթուղիկէ

ԷՋՄԻԱԾՆԻ։

Дозволено Цензурою. Тифлисъ 1870 г. 16 Іюня.

ԻԻՐ

ՀԱՆԳՈՒՅՑԵԱԼ ԾԼՈՂԱՑ

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՆՈՒՐՈՒԱՔԷ

ՑՕՐԻՆՈՂՆ։

78148-42

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUZ-Арм.ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ անվան
им. А. Мясникяна

1211-87

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ։

Այս գիրքը, որ «Մայրենի Լեզու» անուանեցի, բաժանուում է երկու մասն։ Առաջին մասն է «Այբբենարան», իսկ երկրորդը՝ «Ընթերցարան»։ Այբբենարանը բաժանուում է տասն և երկու վարժութիւն։ Իւրաքանչիւր վարժութեան մէջ աշակերտը ծանօթանում է միմիայն երեք կամ չորս տառի հետ, կարդում է և գրում է հէնց իսկ առաջին դասից զանազան բառեր և նախադասութիւններ՝ այդ տառերից յօրինած, ուրախանում՝ տեսնելով որ այն դժուար և ծանր գործը, որ անուանում ենք «կարդալ ու գրել», այդպէս շուտով և հեշտութեամբ է կարողանում կատարել, զգում է, թէ այն նա ևս մարդ է և գիտէ կարդալ և գրել, ուստի և ոգեւորուելով՝ սկսում է սիրով շարունակել և առաջ երթալ առանց ձանձրութեան և դժուարութեան, և ուսանել կարճ միջոցի մէջ վարժ կարդալ և գրել, որոյ համար յառաջ ոչ թէ ամիսներ՝ այլ տարիներ էր գործ դրվում։ Բացի սրանից իւրաքանչիւր վարժութեան մէջ աշակերտը ստանում զանազան և բազմակողմանի տեղեկութիւններ և գիտութիւններ իւր շրջակայ—մարդկային կեանց մէջ գործածական և ամենահարկաւոր—առարկաների վերայ, որով և բացվում նորա մտաւոր կարողութիւնները և ընդարձակվում նորա գիտութեան և դատողութեան շրջանակը։ Այս բանի վերայ, որ դաստիարակութեան և մտաւոր զարգացման զըլխաւոր հիմն է, մեր ծխական դպրոցները մինչև ցայժմ բնաւ ուշադրութիւն չեն դարձրած, կարծելով թէ ուսումը և դաստիարակութիւնը կայանում լոկ կարդալ ու գրել ուսուցանելումը որ այն ինչ երկրորդական բան է դաստիարակութեան գործի մէջ. ուստի և աշակերտաց մտաւոր կարողութիւնները մնու-

մեն տարիներով մի և նոյն դրութեան մէջ առանց մշակելոյ և գործադրութեան։

Իւրաքանչիւր Վարժութիւնը պարունակումէ իւր մէջը երեք տեսակ կրթութիւն կամ պարապմունք, այն է՝ ընթերցողութիւն, նօտէյգրութիւն և գրութիւն։

Ընթերցողութիւնը կարելի է ուսուցանել երկու եղանակաւ, առաջինն՝ արտասանելով ուղղակի ամբողջ բառեր, և ապա այդ բառերը լուծելով՝ ցուցանել աշակերտին նոցա մէջի պարզ հնչիւնները կամ տառերը, իսկ երկրորդն՝ սորա հակառակ, սկսելով պարզ հնչիւններից կամ տառերից գնալ առաջ և կազմել բառեր։ Առաջին եղանակը, թէ և բնական է և աւելի ընդունած, բայց որոշեան սորա համար ուսուցչի կողմանէ շատ փորձառութիւն և ընդարձակ գիտութիւն է հարկաւոր, որ դեռ ևս դժուար է պահանջել մեր ծխական դպրոցների ուսուցիչներից, վասնզի հարկաւոր է գործ դնել առ այժմ երկրորդ եղանակը, այն է՝ ուսուցանել նախ գրերի հնչումը, և ապա կազմել նոցանից բառեր։

Գրերի հնչմունքը պէտք է այսպէս ուսուցանել, ինչպէս որ նոքա հնչվումեն բառերի մէջ. օրինակ, « պէտք է հնչել » (ինչպէս որ լսվումէ «Տ բառի մէջ), և ոչ թէ՝ «Է. Տ պէտք է հնչել Տը (ը արագ և անհնչմանելի արտասանելով, ինչպէս Տշ՝ բառի մէջ), և ոչ թէ Տեն կամ Տե. Շ չէ պէտք է հնչել շ՝ կամ շէ, այլ այնպէս, ինչպէս որ նա լսվում է շաշ-ում բառի մէջ, այսինքն մի-այն շը, կամ զօրեղացնելու համար՝ այսպէս ևս-շը. Ղ չէ պէտք է հնչել ղ՝, այլ ղը կամ ղը, ինչպէս որ լսվումէ ղաղ-էլ բառի մէջ. Ծ չէ պէտք հնել ծէ, այլ այնպէս, ինչպէս որ դա լսվումէ ծծհան բառի մէջ, այսինքն ծը կամ ծծ. այսպէս էլ Ֆ պէտք է արտասանել Ֆը, և ոչ թէ՝ Ֆէն կամ Ֆէ. Ֆ պէտք է հնչել ֆը, և ոչ թէ՝ ֆէն կամ ֆ՝. Ֆ պարտ է հնչել ֆը, և ոչ թէ՝ ֆ՝ն կամ ֆէ, և այլն։ — պարտ է հնչել ինչպէս մի տառ, և բաղաձայն տառից յառաջ իրրև ռուսայ Ъ, կամ ինչպէս որ հնչվումէ ռ-ից բառի առա-

ջի վանկը, օրինակ՝ ջ-ա, շ-ա-շ, ճ-ա-ճ, և այլն. իսկ ձայնաւորից առաջ իբրև վ, օրինակ՝ ջ-ա-վ-ն, ն-ա-ջ, ն-ա-ճ, և այլն։ — տառի համար մեռաւանելիրարդ և երկուսանելիրարդ վարժութեանց մէջ հարկաւոր է հասկացնել աշակերտացը, որ այդ տառը բառի մէջին՝ ձայնաւոր տառից առաջ, և բառի վերջին՝ հնչւում է իբրև վ, օրինակ՝ ն-ա-, ե-ն-, ք-ա-ն-, հ-ա-ն-դ-, տ-ա-ճ-, փ-ա-ս-ք, և այլն. իսկ ի տառի հետ՝ բաղաձայն տառից յառաջ հնչւում է իբրև ի-ա կամ ռուսաց Ю և գաղղիացւոց U, օրինակ՝ ի-ր, մ-ա, ճ-ա, լ-ա-ն-ի-ն, և այլն. ոչ բաղաձայն տառերի առաջ հնչւում է ինչպէս ու, օրինակ՝ յ-ոյ-ս, լ-ոյ-ս, ն-ոյ-ն. իսկ ձայնաւորների առաջ իբրև օ, օրինակ՝ հ-ոյ-ա-ծ-ս, ք-ա-ղ-ա-ք-ն. և այլն. յ տառը հնչւում է իբրև կէս ի, օրինակ՝ հ-ա, ք-ա, մ-ա-ր, պ-ա, և այլն։

Տառերը ճիշդ հնչել ուսուցանելուց յետոյ, հարկաւոր է սովորացնել միմեանց հետ նոցա կապել, սորա համար պէտք է մէկ մէկու յետևից տառերը արագ հնչել տալ, զօրինակ՝ մ-ի կամ մ-ի արագ հնչելով կըլինի մի, ապնպէս ա-մ կամ ա-մ կլինի ամ, ի-մ կամ ի-մ կլինի իմ, ամ-ի-ամ կամ ա-ի-ա կլինի ամիա, և այլն։ Յետոյ այնորիկ պէտք է կարդալ տալ բաղմավանկ բառերը, միայն թէ առանց վանկերի՝ արագ հնչեցնել տալով բոլոր տառերը միմեանց յետևից, որով և կարտասանվի այն բառը, օրինակ՝ ա-մ-ի-ն կամ ա-մ-ի-ն կլինի ամին, մ-ա-ա-ի-մ կամ մ-ա-ա-ի-մ կլինի մաամիմ, ամ-ա-մ-ա-մ կամ ա-ա-մ-ա-մ կլինի ամամամ, և այլն։

Ընթերցանութեան մէջ կան մի քանի բառեր, որոնք սկզբումը ոչ տառը չունենալու պատճառաւ դրած են ընդդէմ սովորական կանոնի ուղղագրութեան, ինչպէս՝ է-ա վոխանակ էա, մ-ա-ն վոխանակ մանա, շ-ա-ր վոխանակ շար, պ-ա-ռ վոխանակ պառ, և այլն։ Բայց այդ վոյթ չէ, ըստ որում աշակերտը սկզբումը լոկ կարդալուն է ուշ դարձնում, և ոչ թէ ուղղագրութեանը։

Խրատանչիւր Վարժութիւն ունի բառական նիւթ ընթերցանութեան համար, և այս այնու նպատակաւ է, որ երեխայն՝ ունենալով իւր գործը միմիայն մի քանի գրերի հետ, և ոչ

թէ 76 կամ 80 (հաշուելով և գլխագրերը, որոնք բոլորովին առանձին գծագրութիւն ունին, և երեխայի համար իրրև մի ուրիշ նոր գրեր են), չի դժուարանալ հեշտ և արագ կարդալու, որով և շուտով կրացուի նորա գրավարժութիւնը։ Ընթերցանութեան նիւթերը՝ ըստ ներելոյ տառերի, որքան հնար էր ջանացի, որ երեխայական կեանքից լինին և կենցաղօգուտ բաներ։

Խօսակցութիւնը այնպիսի երեխանց համար է, որոնք արդէն գիտեն շատ թէ քիչ հայերէն խօսել, և այդ ժամանակն էլ պէտք է նայել երեխանց հասակին և մտաւոր կարողութեանը, և ըստ այնմ համառօտել կամ ճոխացուցանել այդ խօսակցութիւնքը, և բաց յայտնէ այնպիսի ձևով և բառերով հաղորդել երեխային, որ դիւրըմբռնելի լինի նորա մտաց համար և հասկանալի։ Այս խօսակցութիւնքը յօրինած են իբրև օրինակ կամ գաղափար ուսուցչի համար, վասնզի պարտաւոր չէ նա կուրօրէն հետևելու այս խօսակցութեանցը, նա կարող է ըստ իւր տեսութեան և հանդամանաց համառօտել, ճոխացնել, և կամ սոյն ձևով քննել և միւս բառերը կամ առակայքը, որ կան ընթերցանութեան մէջ։

Խօսակցութեան ժամանակը ուշ դարձնելու է և լեզուի մաքրութեանը, ըստորում երեխայն փոքր ժամանակից պէտք է ուսանի մաքուր լեզուով խօսել, ապա թէ ոչ մեծ ժամանակը դժուար է նորա լեզուն ուղղել. վասնզի պէտք է ջանալ փոխարինել տալ փոքր առ փոքր դաւառական և օտար ազգի բառերը բուն հայոց լեզուի բառերով։ Հայոց բառերի հետ դրած են փակագծի մէջ և դաւառական կամ օտարազգի բառերը, որ երեխայն կարողանայ նոցա միջնորդութեամբ հասկանալ հայոց բառերը և գործ դնել։

Խօսակցութիւնը առանձին չի պէտք է ուսուցանուի աշակերտացը, այլ միասին ընթերցանութեան հետ, քննելով իւրաքանչիւր բառը, որ կը կարդայ երեխայն. ըստորում այդ խօսակցութիւնքը ընթերցանութեան մէջ պատահած բառերի կամ առարկաների վերայ են։

Դրամների, չափերի և այլ զանազան առարկաների վերայ խօսակցութեանց ժամանակը հարկաւոր է ցոյց տալ աշակերտացը այդ առարկաները, որ հնչում ըմբռնեն նոքա և պարզ ձևակերպեն իրանց մտաց մէջ այդ առարկաների յատկութիւնները, այսինքն նոցա ձևը, մեծութիւնը, չափը, գոյնը, նիւթը, և այլն։

Այդ խօսակցութիւնները մեծ օգուտ կբերեն երեխային՝ բանալով և ընդարձակելով նորա մտաւոր կարողութիւնները և գիտութիւնը, և բաց յայտնէ կուսուցանեն նրան կանոնաւոր և մաքուր լեզուով խօսել, ազատ արտայայտել իւր միտքը, և դատողութիւն անել որևիցէ առարկայի վերայ։ Այս տեսակ խօսակցութիւնքը աւելի հարկաւոր են և օգտաւէտ երեխայի համար, քան թէ լոկ ընթերցանութիւնը. ուստի խօսակցութեան վերայ առաւել ուշ դարձնելու է, քան թէ ընթերցանութեան։ Եւ արդարև՝ լեզու ուսանիլ չէ նշանակել միայն կարդալ և գրել ուսանիլ, այլ ստանալ և կարողութիւն ազատ և կանոնաւոր կերպիւ յայտնելոյ իւր միտքը այն լեզուով։

Իւրաքանչիւր ընթերցանութիւն և խօսակցութիւն՝ նայելով աշակերտի մտաւոր կարողութեանը, կարելի է չորս, հինգ և աւելի ևս դաս բաժանել։

Եթէ պատահի այնպիսի աշակերտ, որ հայերէն խօսել չը-գիտէ, այն ժամանակը այս խօսակցութեանց փոխանակ, որ ան հասկանալի կլինին նորա համար, հարկաւոր է գործ դնել «Դասագիրք Ռուսաց լեզուի» կոչեցեալ հրահանգի առաջին մասը, որ է գիւրին նախադասութիւնք և խօսակցութիւնք, յօրինած այնպիսի ձևով, որ երեխայն ստիճան առ ստիճան յառաջ երթալով՝ կը կարողանայ փութով և առանց դժուարութեան իւր միտքը փոքր ի շատէ արտայայտել ուրիշին։ Եթէ երեխայն ռուսերէն չէ իմանում, այլ վրացերէն կամ թուրքերէն, այն ժամանակը հարկաւոր է յիշեալ գրքի ռուսերէն բառերը փոխարինել վրաց կամ թուրքի բառերով և այնպէս ուսուցանել։

Գրաւոր՝ որպէս և խօսակցութիւնը նոյնպէս պէտք է ուս-

գնթաց լինի ընթերցանութեան հետ։ Գրութիւնը հարկաւոր է յառաջ ուսուցանել աշակերտացը դասատանը, ցոյց տալով մեծ տախտակի վերայ, թէ ինչպէս պէտք է գրել իւրաքանչիւր տառը, և յետոյ պատուիրել որ նոքա օրինակեն ուսումնարանումը կամ տանը գրքի վերջին գրած ձեռագիր տառերը, տալով իւրաքանչիւր հատարը կամ դասը իւր ժամանակին։

Ձեռագիր օրինակները՝ չնայելով վիմագրութեան ծախքին, հարկաւոր համարեցի դնել այն պատճառաւ, որ գիւղական ուսուցիչներից շատերը՝ կարդին գրել չգիտենալով, տալիս են երեխացը կամ անճոռնի օրինակներ և կամ պատուիրումեն նոցա տպագիր գրից օրինակելու, որ անօգուտ աշխատութիւն է և կորուստ ժամանակի։

Երբոր երեխայքը լաւ կը ծանօթանան տառերի գծագրութեանց հետ, և կը կարողանան վարժ գրել իւրաքանչիւր տառը առանց օրինակի, այն ժամանակը կարելի է բոլորին միասին գրել տալ, թելադրելով նոցա այն բառերը և նախադասութիւնները, որք կան իւրաքանչիւր գրութեանց մէջ։

Վարժութիւններից յետոյ աշակերտը կծանօթանայ գրելխատրերի հետ, որ հարկաւոր համարեցի վերջը ձգել երեխացը սկզբից չծանրաբեռնելու համար։

Ն. Տէր Յովհաննէսեան։

R. MARTIROSOFF,
TIFLIS.

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ։

ՀՆԳԵՐՑԱՄՆՈՒԹԻՒՆ։

ՄԻ. ԻՆ. ՄԻ. 2.

Իմ, մի ի, մի ամ, 2ի2, 2մ2։

Ամ, ամի, մամի, ամամ, ամամամ, 2ամամամ, 2ամամամի, 2ամ, 2ամամամ, 2մ2, 2ի2, մամ2, մամ2ի մամ2, մամ2ամ։

Մի ամ, մի 2ի2, մի 2մ2, մի 2ամամամ, մի 2ամ, մի 2ամամամ։

Իմ 2ամամամ, իմ 2ի2, իմ 2ամամամ, իմ մի 2ամ։

ԿՈՒԱԿՑՈՒԹԻՒՆ։

Յոյց տուր Ի մատդ։ Յոյց տուր երկու մատդ, չորս մատդ, երեք մատդ, հինգ մատդ, ութ մատդ, վեց մատդ, իններ մատդ։ Ամէն ձեռքդ վերայ քանի մատն ունիս։ Բոլոր մատներդ որքան են։ Համարել իմանումես, թէ ոչ։ Համարէ մինչև տասը,

քանը, յիսունը, հարիւրը, հազարը։ Հաճարէ մինչև հարիւրը՝ տասը տասը։

Շոմոմը ինչ բան է։ (Պտուղ է։) Ծառի պտուղ է, թէ ուրիշ բանի։ Ի՞նչ բանի։ Ցեռեքէ էք այդ պտուղը, թէ ոչ։ Ի՞նչ տեղ է դուրս գալի։ Մեծ պտուղ է, թէ փոքր։ Ի՞նչ պտղի չափ է։ Ո՞ր պտղի տեսակից է։ (Սեխի։) Ի՞նչպէս հոտ ունի։ Ի՞նչ գոյն ունի։ Ի՞նչ ձևի է։ (Գնդաձև, կլոլոլ։) Մէջը ինչ կայ։ (Սերմը։) Շամամը ուտումեն, թէ ոչ։ Ի՞նչ համ ունի։ Ասացէք, ինչ պտուղներ գիտէք, որոնք շամամի նման ծառի պտուղներ չեն, այլ ուրիշ բոյսերի։ (Սեխ, ձմերուկ, դդում, խէար, բաղրիճան)։

Ա՞ր ինչ կնշանակէ։ (Տարի։) Տարին ինչ է։ (Ժամանակ է։) Մեծ ժամանակ է, թէ փոքր։ (Մեծ։) Տարին քանի ամիս ունի։ Ասա ամիսների անունները։ Այժմ ո՞ր ամիսն է և ասա քանիսն է։ Նոր տարին կամ տարեմուտը ո՞ր ամսին է լինում։ Ամիսը քանի օր ունի և քանի շաբաթ։ Շաբաթը քանի օր ունի։ Գիտես օրերի անունները, թէ ոչ։ Այսօր ինչ օր է։ Էգուց ինչ օր է։ Երեկ ինչ օր էր։ Այն ո՞ր օրն է, որ չենք բանում։ Կիրակին ո՞ր օրից յետոյ է լինում։ Կիրակի օրից յետոյ ինչ օր է լինում։ Օրը քանի ժամ (սահաթ) ունի։ (Օր ու գիշերը 24 ժամ ունի։) Ժամը քանի բաղէ ունի։ (60։) Բաղէն քանի վայրկեան ունի։ (60։) Վայրկեանը մեծ ժամանակ է, թէ փոքր։ (Շատ փոքր, այնպէս որ մարդ հազիւ կարող է աչքը խփել և բանալ։) Այժմ ո՞ր թիւն (տարին) է։ Այս թիւը ո՞ր ժամանակից է սկսում։ (Քրիստոսի ծնունդից։) Դու քանի տարեկան ես։ Ո՞ր թուին ես ծնուել։

Ճիշը (բօթիլը) ինչ բան է։ (Աման է։) Ի՞նչ ձևի աման է։ Ինչի համար են գործ ածում այդ ամանը։ Ինչից են շինում։ (Շուշից։) Մեր քաղաքումը [գիւղումը] շիշ շինումեն, թէ ոչ։ Ասա ինչ տեղ են շինում։ (Մեծ քաղաքներումը։) Կաւից էլ այդ ձևի աման կարելի է շինել, թէ ոչ։ Կաւն ինչ է։ Կաւից էլ ինչ ամաններ են շինում։ Կաւից ամաններ չի՞ ողին ինչ են

ասում։ (Բրուտ։) Տեսել է.ք ինչպէս է բրուտը կաւից ամանները չինում, թէ ոչ։ Ո՞վ կարող է պատմել։ Կաւից չինած ամանները ինչո՞ւ են այրում։

Շա՞տչէ՞ ինչ բան է։ (Ձուկն է։) Մեծ ձուկն է, թէ փոքր։ (Փոքր։) Տեսել ես թէ ոչ։ Ի՞նչ տեսակ ձուկն է։ Ձկները ինչ տեսք են լինում։ Սովէն ջրի մէջ էլ ձկներ գտնվումեն, թէ ոչ։ Ձկները ոտներ ունին, թէ չէ։ Սպա ինչպէս են մտնում։ (Լող են տալի։) Ձկները ինչով են կերակրվում։ Ձկներն ինչպէս են շատանում։ (Ձու են ածում և այդ ձուերից մանր ձկներ են դուրս գալի։) Ձկան ձու տեսել կամ կերել ես, թէ ոչ։ Ներա տեսնեն ինչ է։ (Խաւիար, խեղիալայ։) Մեր գետի մէջն էլ ձկներ կան, թէ ոչ։ Եթէ կան՝ ինչ տեսակ ձկներ են։ Շատայի էլ կան՝ թէ ոչ։ Ռուրիշ էլ ինչ ձկներ ես տեսել, կամ ինչ ձկների անունները գիտես։

Շա՞տ ինչ է։ (Փոզ է։) Քանի կոպէկ է։ Քանի շային է մի արաղ։ Քանի շային է մի մանէթ։ Մի մանէթը քանի արաղ ունի և քանի կոպէկ։ Մի արաղն քանի կոպէկ ունի և քանի երկուշահանոց։ Մի մանէթը քանի երկուշահանոց ունի քանի երեքշահանոց և քանի հինգշահանոց։ Երեք արաղն է շատ, թէ կէս մանէթը։ Մի մանէթն է շատ, թէ չորս արաղն։ Սև փոզը ո՞րն է. խակ ալիտակը։ Փոզն ինչից են կարում։ (Գընձից, արծաթից և ոսկուց։) Մեր երկրումը գտնվում ինչ փոզեր ենք գործ ածում։ (Շահանոց, երեքկոպէկանոց, երկուկոպէկանոց, միկոպէկանոց, կէսկոպէկանոց ու քառորդկոպէկանոց։ Արծաթի ինչ փոզեր։ (Մանէթանոց, տասնհանոց, ինանոց կամ երկուարտանոց, վեցշահանոց, հինգշահանոց, արտանոց, երեքշահանոց, երկուշահանոց կամ ռուբլանոց, ու շահանոց։) Խակ ոսկի, (Երեքմանէթանոց, հինգմանէթանոց ու տասնմանէթանոց։) Գընձ, արծաթի ու ոսկի փոզերի տեղ թեթևութեան կամ յարմարութեան համար ինչ փոզեր ենք գործ ածում։ (Թղթի փոզեր։) Թղթի ինչ փոզեր կան։ (Մանէթանոց, երեք-

մանէթանց, հինգմանէթանց, տասնմանէթանց, քսանու-հինգմանէթանց, յիսունմանէթանց ու հարիւրմանէթանց։) Փողը մեզ ինչի է հարկաւոր։

Գ ր ա ւ թ ի ւ ն։

Օրինակեցէք այստեղ կամ տանը առաջին համարը ձեռագիր տառերի (գրերի) (մեծ գրքի վերջին) և ցոյց տուէք ինձ. բայց տեսէք յառաջ, թէ ես ինչպէս եմ գրում այդ տառերը։ Ահա՝ այսպէս պէտք է գրել, է այսպէս, շ այսպէս, և ՀՀ այսպէս։ Այժմ ոմն է կարող ձեզանից գրել, թող դայ գրէ տախտակի վերայ տեսնում։ Գրէ՝ ա, Հ, է, շ, Հ, ա, է, շ, Հ, է, ա, շ։ Շ այդպէս չեն գրում։ Շ-ի գլուխը պէտք է խաչի վերայ լինի։

Գրեցէք։ ԱՀ (աաաՀՀՀ, ծանր ու երկար արտասանելով), էՀ, ՀԷ, շԷշ, շաշ, ԱՀա, ԱՀԱՀ, շԱՀԱՀ, շԱՀԱԷ, ՀԷ շԱՀԱՀ, ՀԷ շԷշ։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ։

Ը ն թ ե ր ց ա ն ո ւ թ ի ւ ն։

Ը. ա. կ.

շատ, մատ, կամ, տամ, տատ, տակ, մէտ, տէկ, կա։

կաշի, մաշիկ, կամիմ, մատիա, ատամ, շիտակ, միակ, մատակ, կատիկ, կատակ,

մայրիմ, ատիմ, տաշտակ։

ակտամա, միտամիտ, միտակտամ, մշակ (մ-շակ), կտակ (կ-տակ), տաշտ, միշտ։

իմ տատը, իմ մատը, իմ տատի մատը, իմ տատամը, իմ մատիտը, իմ տատի մայրիկը։

մի մատիտ կա։ մատիտ շատ կա։ մի մատիտ կամիմ։ իմ տատը մի մատիտ կամի։

մի շամամ կա։ շամամ շատ կա։ մի մշակ կա, շատ շամամ կամի։

շատ մշակ կա։ մի մշակ կամիմ։ իմ տատը շատ մշակ կամի։

շատ մայրիկ կա։ մի մայրիկ կամիմ։ իմ մշակը շատ մայրիկ կամի։

կաշի շատ կա։ մի մշակ կա, շատ կաշի կամի։ մի շիշ կամ մի տիկ կամիմ։ շիշ կամ տիկ շատ կա։

մի մշակ կա, մի տաշտ կամ մի տաշտակ կամի։ տաշտ կամ տաշտակ շատ կա։

իմ մշակը շատ միտամիտ մշակ ա։ միտամիտ մշակ շատ կա։

Խօսակցութիւն։

Ցոյց տուր հոգնէրդ։ Մատներդ ինչքիդ վերայ են։ Քանի ձեռքն ունիս։ Ո՞րն է աջ ձեռդ և որն է ձախդ։ Ամեն ձեռքիդ վերայ քանի մատն ունիս։ Առաջի կամ մեծ մատի անունն ինչ է։ (Բոյթ, բութ։) Երկրորդ մատի անունը։ (Ցուցամատը։) Երրորդինը։ (Միջամատը։) Չորրորդինը։ (Ձագմատը։) Իսկ հինգերորդինը։ (Ճկոյթ, ճկութ։) Ցոյց տուր բութդ, միջամատդ, ճկութդ, ցուցամատդ, ձագմատդ։ Մատներդ քանի խաղ (ծալ) ունին։ (Երեք խաղ, բացի մեծ մատը։) Ո՞րն է մատիդ եղունգը։ Ոտքերիդ վերայ էլ մատներ ունիս, թէ ոչ։ Քանի հատ են։ Ձեռքերիդ և ոտքերիդ մատները ինչ զանազանութիւն ունին։ Ոտքերիդ մատներով էլ կարող ես բան բռնել, ինչպէս որ ձեռքիդ մատներովը, թէ ոչ։ Ինչու համար։ (Որովհետև ձեռքերիս վերայ բութը միւս մատների հետ կից չէ, ինչպէս ոտքերիս վերայ է, այլ նոցա դիմացն է, ուստի և նոցա հետ կպցնելով կարողանում եմ բան բռնել։)

Մոլխը (կարանդաշը) ինչի համար է։ Ինչից է շինած։ (Տէջը կաղուզ քարէ և դուրսը փայտ։) Դրսի փայտը ինչի համար է, երբար նրանով չենք գրում։ Մեր քաղաքումը [գիւղումը] մատիտ շինումեն, թէ ոչ։ Ապա ինչ տեղ են շինում։ Իսկ այս տեղ մատիտ ծախումեն, թէ ոչ։ Ի՞նչպէս են ծախում հատը։ Մատիտով ինչի վերայ են գրում։ Մատիտով գրածը կարելի է ջնջել, թէ ոչ։ Ինչով են ջնջում։ (Էզինով։) Էզինը ինչ բան է։ (Ցաւի խէժ է։)

Ո՞ւմ ենք ասում դոք։ Ձեր հօր հօրը դուք ինչ էք ասում։ Իսկ ձեր մօր հօրը։ Դուք ձեր հօր ինչն էք։ Իսկ ձեր պապի ինչը։ Ձեր հօր եղբօրը ինչպէս էք կոչում։ Իսկ ձեր մօր եղբօրը։ (Քեռի, մօրեղբայր։) Ձեր հօր քրոջը ինչ էք ասում։ Իսկ ձեր մօր քրոջը։ Ձեր քրոջ մարդը ձեր ինչն է։ Իսկ դուք նորա ինչն էք։ (Անկրնաղը, աներ որդին։) Ձեր հայրը նորա ինչն է։

(Անները։) Իսկ ձեր մայրը։ (Զորանչը։) Ձեր փեսի հայրը կամ մայրը ձեր ինչն է։ (Խնամին։) Ձեր եղբօր կինը ձեր ինչն է։ (Հարսը։) Իսկ դուք նորա ինչն էք։ (Տաղրը։) Ինքահայր կամ ինքամայր ում ենք ասում։ Իսկ ամն կամ սանիկ։ Ձեր սանի հօրը կամ մօրը ինչ էք ասում։ Որբ ում ենք ասում։ Իսկ այրի։ Ասացէք, ձեր ընտանիքը քանի հոգի են և ովքեր են։

Տ՝շան ինչ բան է։ Իսկ տաշտակը։ Տաշտն ու տաշտակը ինչ ձևի են լինում։ Ինչից են շինում և ով է շինում։ Ի՞նչ բանի համար են նոցա գործ ածում։ Դուք ձեր տանը տաշտ կամ տաշտակ ունիք՝ թէ ոչ։

Կ՝ոշն ու մորթին մէկ են, թէ զանազանութիւն ունին։ Ի՞նչ զանազանութիւն ունին։ Կաշուից ինչեր են շինում։ (Կօշիկ, մաշիկ, տրեխ, գոգնոց, տիկ։) Իսկ մորթուց ինչեր։ (Քուրք, գլուխ կամ փասախ, քսթիպայ։) Ո՞ր անասունների կաշին ենք մեզ համար գործ ածում։ (Եզան, կովի, գոմշի, հորթի, ձիու։) Իսկ ո՞ր անասունների մորթին։ (Գառան, ոչխարի, այծի, աղուեսի, գայլի։) Կաշի շինողին ինչ են ասում։ (Կաշեգործ կամ դաբաղ։) Ո՞ւմ են ասում կօշկակար կամ խարազ, քուրքչի, փասախչի։ Մեր քաղաքումը [գիւղումը] այդ արուեստաւորներից կա՞ն՝ թէ ոչ։

Դու քանի ապամ ունիս։ Հաւատքդ ես, թէ ոչ։ Հաւատաւոր մարդը քանի ասամ է ունենում։ (Երեսուն և երկու։) Նոր ծնած երեխէն ասամներ ունենում՞, թէ ոչ։ Այդ ի՞նչ են դուրս գալիս նորա ասամները։ (Մի տարուց յետոյ։) Առաջ ո՞ր ասամներն են դուրս գալիս։ (Առաջնասամները։) Նոքա ինչ ձևի են։ (Տափակ և սուր։) Նոցանից յետոյ։ (Ժանիքները, որ երկայն և սուր ձև ունին։) Իսկ ամենից վերջը։ (Սղոտիները, որ հարթ և հատ են լինում։) Ուրեմն մենք քանի տեսակ ասամ ունինք։ (3 տեսակ։) Ցոյց տուր տեսնեմ իւրաքանչիւր տեսակը։ Սղոտիները ինչի համար են։ (Ծամելու։) Իսկ առաջնասամները և ժանիքը։ (Խածանելու կամ կտրելու։) Ամեն կենդանի՞ էլ ասամներ ունի,

թէ ոչ։ Որոնք ունին և որոնք ոչ։ Կենդանեաց առանները միակերպ են, թէ զանազան։ (Զանազան։) Ի՞նչ զանազանութիւն ունին։ (Խոտակերները ժանիք չունին։) Ինչու համար։ (Որովհետև ժանիքները խածանելոյ կամ պատռելոյ համար են, իսկ խոտակերները այդ հարկաւորութիւնը չունին։) Մեր առաջնորդ տեսակ անասունների առաջների նման են՝ մտակեր թէ խոտակեր։ (Մտակեր)։

Գ ր ա ւ թ ի ւ ն։

Օրինակեցէք այժմ երկրորդ համարը և ցոյց տուէք ինձ։ Նայեցէք թէ ես ինչպէս եմ գրում այդ տառերը։ Ահա ը այսպէս պէտք է գրել, պ այսպէս, և ն այսպէս։ Ո՞վ չհասկացաւ։ Արի՛ տախտակի մօտ։ Գրէ՛ պ, ը, ն, ը, պ, ն, ը, ն, պ։ Լաւ նայեցէք, և տեսէք իւրաքանչիւր տառը ինչպէս է գրվում և խաղի ինչ տեղը։

Գրեցէք։ շապ, նապ, պապ, պեն, պան, ենտ պանտ, ենշ, նշեն, ապանտ, նապեր, ենպեն, շենպան, նշան, ռեան, պանշ, պանշպան, անենտ, ռեանռեպ։

Մի նապեր ենռեն. նապեր շապ ան. ենտ պապը ռե նապեր ենռե։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ։

ր. ու. ն.

տար, ուր, տուր, տուն, կեր, կին, նուշ,

ուշ, շուն, շուտ, մուր, կուտ, արտ։

արշակ, արամ, արշամ, շուշան, տիկին, տանու, կատու, ունիմ, ուրիշ, անուշ, արի, աշուն, տարի, արմատ, մարմին, անուն, մատնել, նամակ, ամուր, կամար, կարմիր, շուշա, կարկուտ, տատրակ, ընտիր։

Նշան (ն-շան), նման, տկար, կտամ, կրակ, կտուր, կուշտ, մուկն, ինն, տանն, մանր։

մարիամ, մանիշակ, շուշանիկ, շամիրամ, արարատ, կիրակի, կինարմատ, մատանի, աշտարակ, շարական, շարունակ, մանկական, տիրական, տիրուհի, ընտանի։

Իմ անունը արշակ է։ Նրա անունը արամ է։ Իմ տատի անունը մարիամ է։ մանիշակի տատի անունը շուշան է։ շուշանը մանիշակի տատն է։ մարիամը իմ տատն է։

արշակը արամին շատ նման է։ մանիշակը իմ տատին նման է։ շուշանը մանիշակի տատին շատ նման է։

արամը տկար է։ արշակի տատը վիշտ-

տկար ու։ մանչիկը շատ տկար ու։ իմ տատի տունը մի կին էլ, նա շատ տկար ու։

արշամը մի մատիտ ունի։ արամը իննը մատիտ ունի։ շուշան, արամի մատիտը ո՞ւր ու։ արամի մատիտը տանն ա։ արշակի նամակը ո՞ւր ա։ արշակի նամակը տատի տանն ա։ իմ նամակը ո՞ւր ա։ տանն ա։

արամ՝, արշամը ո՞ւր ա։ նա տանն ա։ արշամ՝, շուտ արա արի իմ նամակը տար տուր տատին ու շուտ արի, մի ուշանար։ մարիամ՝ իմ մատիտը տար տուր մանչակին ու շուտ արի տուն։ արամ՝, մի ամսան նուշ տար տատին տուր։ մարիամ՝, արամին նուշ շատ տուր, տանի տատին տա. անուշ նուշ տուր։

իմ տատի մատին մի մատանի կա։ մանչիկը մի ընտիր մատանի ունի։ նրա մատանին մի կարմիր տակն ունի։ նրա մատանու տակը շատ ընտիր տակն ա։ իմ տատի տունը մի կին կա, անունը շուշան, նա մի ընտիր մատանի ունի.

իմ տունը մի շուն ունեմ ու մի կատու։

Իմ շունը շատ տրի շուն ա։ Իմ տատի շունը շատ ընտիր ու տրի շուն ա։ Շունը ու կատուն շատ ամուր ատամ ունին։

Արշակը իր տանը մի տատրակ ունի։ Նրա տատրակը շատ ընտիր տատրակ ա, ու շատ նման ա արտի տատրակին։ Արտի տատրակը կուտ ա ուտում։

Իմ տանը շատ մուկը կա, մուկը մանր ու ամուր ատամ ունի, ամա կատուի ատամը շատ ամուր ա։ Մուկը կտրատում ա ու ուտում ա նուշ, կաշի, կուտ ու տանու ուրիշ շատ իր։

Տարին շատ կերակի ունի։ Մի կերակի կա, անունը կարմիր կերակի ա, մանիշակը իմ տատի տանն ա։ Մի կերակի ա, արտը իր տատի տանն ա։ Մի տրի ա, մի տուն ունիմ։ Իմ տունը շատ ամուր տուն ա։ Իմ տան կը տուրը շատ ամուր ա։ Իմ տունը շատ նման ա իմ տատի տանը։ Իմ տատի տանը շատ կիր կա։ Իմ տանը շարունակ կրակ կա։ Մանիշակ, տրի կրակ տար ու տատի տանը կրակ տրա.

նա կրակ կտամ։

Մի մշակ ունիմ, շատ արի ու ընտիր մշակ է։ Նա միշտ տանն է մնում ու տանը մոխիկ է անում։ Իմ մշակի անունը արշամ է։ Իմ մշակի նման արի ու ընտիր մշակ շատ կան։ Մի ուրիշ մշակ ունիմ, նրա անունը արշակ է։ Նա միշտ իմ տատի տանն է մնում ու նրա տանը մոխիկ է անում։

Խ ո ս ա կ ց ո ւ թ ի ւ ն։

Այս պոռնը քնրէ տուն է, թէ փայտէ։ Ո՞ր տունն է ասվում քարէ կամ քարաշէն և որը փայտաշէն։ (Քարաշէն—եթէ պատերը քարով կամ ագուռով են շինած, իսկ փայտաշէն—եթէ փայտով։) Այս տան կտուրը ինչով է ծածկած։ Էլի ինչով են ծածկում տան կտուրները։ Ինչու են տան կտուրները թիքը շինում և ոչ թէ տափարակ (դուզ)։ Այս տունը քանի յարկ (հատակ) ունի և քանի սենեակ։ Սենեակները ինչ ձևի են շինում։ (Քառանկիւնի։) Սենեակների օճաքը և յատակը (պօլը) ինչից են շինում։ Իսկ լուսամուտները։ Լուսամուտների շուշէն այսոնք են շինում, թէ ուրիշ տեղից են բերում։ Դռները ինչից են շինում և ովէ շինում։ Դռան շեմքը որն է։ Դռները ինչով են փակում և ինչով են բացանում։ Այստեղ կոխպէ՛ք և բանալի շինումէն, թէ ոչ. և ինչից են շինում։ Տան պատերը ինչով են արում և ինչով են ներկում։ Ասացէ՛ք, որ սենեակին են ասում սեղանատուն, ննջարան, դահլիճ, առաջնասենեակ, դասատուն, գրատուն, ներքնատուն, խոհանոց։ Անասնոց համար շինած տը-

ներին կամ տեղերին, ինչ են ասում։ (Գոմ, ձիանոց, ոչխարանոց, հաւանոց։) Տեսել էք ինչպէս են տուն շինում, թէ ոչ։ Ո՞վ կարող է պատմել։

Շո՜ւը մեզ ինչ օգուտ է տալիս, որ նրան պահումենք ու կերակրում։ Տաւարածները ու ոչխարածները չներին իրանց հետ ինչու են մեր ածում։ Իսկ որսկանները ինչու։ Շունը որ անասունների թշնամին է։ Շները միասնական են լինում, թէ զանազան։ Ի՞նչ տեսակ շներ ես տեսել կամ գիտես։ Շները ինչ են ուտում։ Իրանց լակոտներին ինչով են կերակրում։ Շները քանի լակոտ են բերում։ Բոլոր անասուններն էլ էդքան են բերում, թէ աւել պակաս։ Ո՞ր անասուններն են մէկ կամ չորս բերում և որոնք աւելի։ Մեր շները երբ են լինում մեզ համար վտանգաւոր։ (Երբոր նոքա կատաղումեն։) Կատաղած շունը ինչ վնասներ կարող է տալ։

Ն՝ա՜ը ինչ բան է։ (Պտուղ է։) Ի՞նչ պտղի չափ է։ Ո՞ր տեղ է դուրս գալի այդ պտուղը և ինչի վերայ։ Ի՞նչ ձևի է լինում նա իսկ ժամանակը և ինչ ձևի հասած։ Նշի ծառին ինչ են ասում։ (Նշենի)։ Նշենին է մեծ, թէ ընկուզենին։ (Ընկուզենին։) Նշենին է մեծ, թէ ծիրանին։ (Մի չափ են)։ Ասացէք, ինչ պտուղներ գիտէք, որոնք դուրս են գալի բաղերումը ծառերի վերայ։ (Խնձոր, տանձ, նուշ, ծիրան, շլոր, բալը, թութը, թուզը, դեղձը, խաղող, սերկևիլ, նռան, ընկոյզ, տխիլ, շագանակ, փշատ, ունաբ, խուրմայ։) Նշից ինչ են շինում։ (Կաթը, գոզինաղ, չուշխելայ։) Նշից ինչպէս են կաթը շինում։ Իսկ գոզինաղ և չուշխելայ ինչպէս։ Ո՞վ է տեսել և ով կարող է պատմել։

Ինչին են ասում պրպ։ (Յանած գետնին։) Արտերումը ինչ են ցանում։ (Յորեան, գարի, հաճար, կորեակ, բրինձ, ոսպ, սիսեռ, կտուտհատ, կանեփ, սիմինտ, գետնախնձոր։) Արտերը ջրումեն, թէ ոչ։ Արտերը երբ են ցանում։ (Աշունքը և գարունքը։) Աշունքը որ ժամանակն է։ (Բաղաքաղի։) Իսկ գարունքը։ (Երբոր ծառերը նոր սկսումեն կանանչել։) Արտերը երբ են հասնում։

Ամառը։) Ամառը որ ժամանակն է։ (Երբոր շատ շոգ է լինում։) Իսկ ձմեռը։ (Երբոր շատ ցուրտ է լինում և ձիւն է գալիս։) Զբաղեալ է յառաջ լինում, թէ աշուղը։ Ապա ինչպէս է, որ աշնանացան ը ձմեռը չէ սառչում ու փչանում։ (Բուսիներն ձիւնի տակին տաք մնում է։) Ուրեմն եթէ ձմեռը ձիւն չգայ և ցուրտ լինի աշնանացանին վնաս է։ (Խոտիկ է։) Աշնանացանն է շուտ հասնում, թէ գարնանացանը։ Գեղինը ցանելուց յետոյ ինչ են անում։ (Վարումն։) Ինչով են վարում։ (Գութանով կամ չիթով։) Գութան կամ չութ տեսել էք, թէ ոչ։ Էարդէք նկարել նոցա ձևը թղթի կամ տախտակի վերայ, և պատմել թէ ինչպէս են շինած։ Ո՞րն է գութանի մասը, խոփը, ձեփը, թևը և ինչի համար են տաք։ Տեսել էք ինչպէս են գութան կամ չութ վարում, թէ ոչ։ Ո՞ւմ են ասում մասկալ։ Մի օրուայ վարած հողին ինչ են ասում։ (Օրավար։) Պատմեցէք ինչպէս են գեղինը վարում, ցանում և տափանում։ Տեսել էք տափանը ինչպէս է շինած, թէ ոչ։ Գեղինը ցանելուց յետոյ ինչու համար են տափանում։

Գ ր ա ւ թ ի ւ ն։

Օրինակեցէք այժմ երբորդ համարը և ցոյց տուէք ինձ։ Ահա տեսէք թէ ինչպէս է հարկաւոր գրել այդ օրինակի տառերը։ ը այսպէս գրեցէք, ռ՝ այսպէս և ն՝ այսպէս։ Ահա կրկին գրեմ, լաւ նայեցէք. ը, ն, ռ՝, ն, ը, ռ՝, ը, ն, ռ՝։ Ով որ լաւ չտեսաւ, թող գայ այստեղ։ Գրէ՛ տեսնեմ։ ը, ռ՝, ն, ռ՝, ը, ն։

Գրեցէ՛ք։ ապա, գոր, ուռն, շուն, նուշ, ապշուղ, նոտուղ, գոր, ղարդ, ղաբդ, ղշուն, նոտն, տարեմ, տարուն, շարունակ, ապարանք։

Ի՞նչ տարան տարին մի տարուն ղրա նոր տարուն ամբը շատ ընարեր ունեն։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԶՈՐՐՈՐԴ։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ։

Ե. Ղ. Ա.

Ես, եմ, էամ, դու, էաս, դաս, ասա, ասեր, էներ, ուէս, էակ, սուր, սուտ, սար, դար։

դաշտ, տեղ, մարդ, մարտ, տասն, մասն, ուտեմ, մաշեմ, ասեմ, սիրեմ, դասեմ, տանեմ, շարեմ, ասեմ, դանակ, մարմն, տապակ, ամիս, երկու, տեսրակ, երկիր, էարաս, ընկեր, դարման, ուսում, սիրուն, արդար, դրուստ, մանկ, վինաս, ազամ։

Շամդան, կերակուր, աշակերտ, տարեկան, դասատուն, ընդունակ, ընտանի, շարադրեմ, շարադրուսեմ, սիրուսեմ, ասուսեմ։

Իմ ընկերներս ես սիրուսեմ։ Իմ ընկերներս ընտիր աշակերտներ են։ Մեր դասատուն ընտիր աշակերտներ շատ էին։ Արշակը, ազատը ու Վինասը իմ ընկերներս են։ Վինասը շատ ընդունակ աշակերտ ա։ Նա միշտ

գնում ա ուսումնարանումը ու իր դասերը սերտում ա։ Ես տասը տարեկան եմ, իսկ վինաը տասն ու երկու տարեկան ա։

Ես ուսանումեմ ուսումնարանումը, իսկ իմ ընկեր արամը տասն ա ուսանում։ Ես շատ դասեր ունիմ, արամը մենակ երկու դաս ունի։ Ես իմ դասերս իմանումեմ։ արշակն իր դասը իմանում ա։ արամ, դասդ ասա, տեսնում իմանումես։ Ես իմ դասը իմանումեմ։

մեր ուսումնարանումը երեսուն ու երկու աշակերտ կան։ մեր ուսումնարանը երկու դասատուն ունի։ վինաը ու արամը մէկ դասատան աշակերտ են։ մեր դասատանը տասն ու ինը աշակերտ կան։ ինը աշակերտը շատ ընդունակ են, իսկ տասը անընդունակ են։

արշակ, տեսրակդ ո՞ւր ա։ իմ տետրակը ուսումնարանումն ա։ դանակդ ո՞ւր ա։ իմ դանակս տանն ա։

արշամ, տե՛ս արամն ո՞ւր ա։ արամը իր տեղեակումը դասերը սերտում ա։ մանչիկն ո՞ւր ա։ նա տանն ա, նա տենդում ա։ մարի-

ամ, տես մանիշակի սենեակումը շամդան կա։ Մի շամդան դիր նրա սենեակումը, նա տկար է։ Իսկ մինսն ուր է։ Մինսը դաշտումն է. նա մեր անասուններին դարմանում է։

Ես տեսա մեր դաշտը։ Մեր դաշտը շատ սիրուն դաշտ է։ Մեր դաշտումը շատ տեսակ անասուններ կան։ Տանում անասուններին ես շատ սիրումեմ ու կերակրումեմ։ Տանում անասունների մի երկուսը դարման են ուտում, շունն ու կատուն միս են ուտում։ Շունը շատ ընտիր կենդանի է։

Տարին տասն ու երկու ամիս ունի։ Ես իմանումեմ ամիսների անունները։ Մարտ ամիսը ես շատ սիրումեմ, իսկ մայիսը ես շատ սիրումեմ։ Մայիսը ամենասիրուն ամիսն է, դաշտերը սիրունանումեն մայիս ամսին։ Մայիսին դաշտերումը մանիշակ ու շուշան շատ կա։ Ես մանիշակ շատ եմ սիրում։

Մեր երկրումը սարեր շատ կան։ Մեր երկրի սարերումը շատ մարդաններ կան։ Մեր սարերը շատ ընտիր ու սիրուն սարեր են։ Ես սի

Պետական գրադարան Гос. Библиотека

ըումեմ մեր երկրի սարերը ու դաշտերը։ մեր երկրի սարերի մէկը արարատ սարն ա։ արարատ սարին ասումեն մասիս։ մասիսը շատ սիրուն սար ա։ ես տեսա մասիս սարը։ մասիս սարի տակին ա արարատա դաշտը։ արարատա դաշտը շատ սիրուն ու ընտիր դաշտ ա։

Խ ո ս ա կ ց ո ւ թ ի ւ ն։

Մեր գլխաւոր ջրաղացը կամ ուտելիքը ո՞րն է։ (Հացն է)։ Իսկ խմելիքը։ Հացն ինչից են շինում։ (Ալիւրից։) Իսկ ալիւրն ինչից են շինում և ինչ տեղ։ Պատմէ տեսնում թէ ինչպէս են ցորենից ալիւր շինում և ալիւրից հաց։ Հացն ինչտեղ են թխում և ինչպէս։ Մեր խմելու ջուրը ո՞րտեղից է։ (Աղբիւրից կամ գետից։) Աղբիւրի կամ գետի ջուրը ինչտեղից է գոյանում։ (Սարերի գագաթին եկած անձրևից և ձիւնից։) Աղբիւրն է մեծ՝ թէ գետը։ Բացի աղբիւրից և գետից էլի ինչ տեղեր է ջուր լինում։ (Լճերի (գօլի) և ջրհորների մէջ)։ Լճերի ջուրը խմումեն՝ թէ ոչ։ (Շատերինը չեն խմում, որովհետև դառն է լինում և աղի։) Իսկ ջրհորներինը։ (Շատերինը խմումեն, որովհետև համով է լինում։) Բացի ջուրը մենք ուրիշ էլ ինչ ենք խմում։ Իսկ բացի հացը մենք ուրիշ էլ ինչ ենք ուտում։ Ամեն կենդանուց միսն էլ ուտումենք, թէ ոչ։ Ապա որոնցն ենք ուտում, և որոնցն ոչ։ Ո՞ր կենդանիքն են մեզ կաթը տալի։ Կաթնից ինչ բաներ են շինում։ (Իւղ, պանիր, մածուն։) Տեսել է՞ք ինչպէս են իւղ շինում, թէ ոչ։ Իսկ պանիրն ու մածունը ինչպէս են շինում։ Ո՞վ է կարող պատմել։ Մենք ինչ բանջարեղէններ ենք գործ ածում կերակուրի (ուտելու) համար և ինչ պտուղներ։ Բանջարեղէններից ու մեկից արմատներից ո՞րն ենք եփած ուտում, և ո՞րը հում։

Քո անունը ինչ է։ Իսկ քո հօր, եղբօր և պապի անունը։ Քո ազգանունը ինչ է։ Անունը մեզ երբ են տալի։ (Մկրտելու ժամանակը։) Մեզ ո՞վ է մկրտում։ Ի՞նչ տեղ է մկրտում և ինչի մէջ։ Տեսել է՞ք ինչպէս են երեխային մկրտում՝ թէ ոչ։ Պատմեցէ՞ք տեսնում։ Կնքելիս ինչ անուններ են տալի տղայոց։ Իսկ աղջկերանց ինչ։ Ասացէ՞ք, ինչ անուններ գիտէ՞ք քաղաքների, գիւղերի, սարերի և գետերի։

Նո՞ւռը ինչի համար ենք գրում, և ինչպէս թղթի վերայ։ Նամակը ինչի մէջ ենք դնում, և ինչո՞վ ենք կնքում (մէրում)։ Նամակի երեսին ինչ ենք գրում։ Մեր նամակները ո՞վ է տանում ու տեղ հասցնում։ (Փոստը, փոշտը։) Փոշտը մեր նամակները ձրի է տանում՝ թէ փողով։ Ի՞նչքան է առնում մի նամակի համար։ Ամէն քաղաք էլ փոշտը գնո՞ւմէ, թէ ոչ։ Իսկ ամէն գիւղ։ Փոշտը միայն նամակնե՞ր է տանում, թէ ուրիշ էլ բաներ։ Ի՞նչ բաներ։ (Փող, ապրանք։) Իսկ մարդիկն էլ կարո՞ղ են փոշտով մէկ քաղաքից միւս քաղաք գնալ։ Ո՞վ է ձեզանից փոշտով ճանապարհ գնացել։ Ո՞վ կարող է պատմել թէ ինչպէս է սարքած փոշտը, և ինչպէս են մարդիկ նստանով ճանապարհ գնում։

Երկրիս երեսը ամէն տեղ էլ հարթ հաւասա՞ր (դուզ) է՝ թէ բարձր ու ցածր է։ Բարձր տեղերին ինչ են ասում։ (Սո՞ր կամ լեռն։) Իսկ ցածր տեղերին։ (Դաշտ։) Զոր ինչին են ասում։ (Երկու սարի մէջ տեղին։) Իսկ ելուր։ (Փոքր սարին։) Սո՞ր տեղերն է աւելի տաք լինում, թէ դաշտ։ Ինչո՞ւ համար։ Ցանքի կամ պտուղների համար ո՞ր տեղն է լաւ՝ սար թէ դաշտ։ Ինչո՞ւ։ Ի՞նչ պտուղներ գիտես, որ սար տեղն էլ կարող են դուրս գալ և հասնել։ Իսկ ո՞ր պտուղները չեն կարող սար տեղը դուրս գալ և հասնել։ Կա՞ն այնպիսի պտուղներ, որ չեն դուրս գալի մեր երկրումը, այլ միայն շատ տաք երկիրներումն են դուրս գալի։ (Կա՞ն։) Որոնք են։ (Լիմոն, նարինջ կամ ապելսին, հնդուվուրմայ, հացապտուղ։) Զմեռը ծառերը պտուղ տալիս են՝ թէ

ոչ։ Իսկ եթէ տաք տան մէջ լինին ծառերը, կարող են ձմեռն էլ պտուղ տալ։ (Կարող են։) Աշխարհիս վերայ կան այնպիսի տաքը երկիրներ, որ տեղ ամենևին ոչինչ չէ գուրս գալի և ամառ չէ լինում։ (Կան։) Իսկ այնպիսի տեղեր էլ կան, որտեղ իսկի ձմեռ չէ լինում, այլ միշտ դարունք ու ամառ։ (Կան։)

Մեր երկրի անունը ինչ է։ (Հայաստան։) Հայաստանը ինչպէս երկիր է՝ լաւ թէ վատ։ (Լաւ։) Ինչով է լաւ։ Նորանով որ ոչ շատ տաք է և ոչ շատ սառը, շատ տեսակ պտուղներ կարողանում են գուրս գալ, օդը առողջարար է, ջրերը սառը ու քաղցրահամ, ունի մեծ մեծ անտառներ, սիրուն սարեր ու դաշտեր։) Ի՞նչ երևելի սարեր կան մեր երկրումը։ (Արագած կամ Ալագեազ սարը, Մասիս սարը, որին Արարատ էլ ենք ասում։) Մասիս սարը աւելի ինչով է երևելի։ (Նորանով որ Նոյեան տապանը նորա վերայ իջաւ։) Մասիս սարը ո՞ր քաղաքի մօտին է։ (Երևանու։) Երևանու մօտ ի՞նչ երևելի վանք ունինք։ (Էջմիածին։) Էջմիածինը ինչո՞վ է երևելի։ Նորանով, որ մեր Գրիգոր Լուսաւորչի հիմնածն է և մեր հոգևոր տէրը կամ կաթողիկոսը այնտեղ է կենում։) Ի՞նչ ծովեր կամ լճեր կան մեր երկրումը։ (Սևանայ կամ Գեղամայ ծովը, Վանայ ծովը։) Ի՞նչ գետեր կան մեր երկրումը։ (Երասխը, Զանգին, Արփաչայն։)

Գ ր ա ւ թ ի ւ ն։

Շարունակեցէք այժմ օրինակել չորորդ համարը։ է այսպէս գրեցէք, ե այսպէս և ո այսպէս։ Ով որ լաւ չտեսաւ, թող գայ այստեղ։ Գրէք, է, ե, ո, ե, է, ո, ե, է, ո։

Գրեցէք։ էս, ես, էս, ես, ինչ, ոչ, ես, ինչ, ոչ, էս, ես, էս, ինչ, ոչ։

Ամբ էրէսս՝ շատ ոչխարներ ունէր ու ինչքան էշ։ Էս ոչխարներս ամբ էրեսի ունէր ու ինչքան։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ։

Է. Գ. Չ.

էս, էն, էդ, էգ, մէկ, կէտ, չէկ, տէգ, մէջ, էշ, չէ, չար, գիր, սէր, տէր, կէս, գեռ, գէշ, ինչ, մերդ, դրինչ, գդակ, տղէտ, դունդ, գիրկ, մէնակ, մերի, չամիչ, կանաչ, գիտուն, գինի, անգին, գարի, անգամ, անդամ, կարագ, տիգրան, սարգիս, Ներսէս։

արեգակ, ագարակ, շագանակ, գրաբեր, դրչագիր, գարեգին, արտաշէս։

Ես մի ընկեր ունիմ, նրա անունը գարեգին է։ Ես նրան շատ սիրումեմ. նա շատ ընտիր աշակերտ է։ իսկ տիգրանին ես չեմ սիրում, նա շատ չար աշակերտ է ու չէ կարդում։ Նրա նման չար աշակերտներին ես միշտ ատումեմ։

Ես երկու գիրք ունիմ, մէկը գերմաներէն է։ Ես գերմաներէն միշտ գրումեմ ու կարդու-

մեմ։ գերմաներէնը ես շատ եմ սիրում։ սարգիսը գերմաներէն չէ իմանում։ տիգրանը գերմաներէն շատ սիրուն կարդում է ու գրում է։ Ներսէսը գերմաներէն շատ սիրուն գիր է գրում։

Մեր տանը շատ միրգ կա։ Ես միրգ շատ եմ սիրում։ տիգրանը միրգ չէ սիրում։ գարեգինը շատ միրգ ունի։ արտաշէսը շատ չամիչ, նուշ ու շագանակ ունի։ արամ, դու շատ միրգ ունիս, կէսը Ներսէսին տուր. նա խակի միրգ չունի։ Չամիչը շատ սիրուն միրգ է։ Ես չամիչ ու նուշ շատ եմ սիրում։

Ես դանակ չունիմ գրիչս կտրեմ։ արամ, դու դանակ ունիս։ Չէ, ես դանակ չունիմ։ Ներսէսը մի սիրուն դանակ ունի։ Նրա դանակը շատ սուր է։ Ներսէս, դանակդ տուր գրիչս կտրեմ։ Ես իմ դանակը արշակին տուի։ արշակ, իմ դանակս տուր մինասին. նա կամենում է իր գրիչը կտրէ։

Խ ա ա կ ց ո ւ թ ի ւ ն։

Գէրբ (գիրքը) ինչի համար է։ Գրքերն ո՞վ է շինում։ (Գիր տուն մարդիքը)։ Գրքերն ինչ տեղ են տպում։ (Տպարանումը։) Տպարան տեսել է՞ք՝ թէ ոչ։ Ո՞վ կարող է պատմել՝ թէ ինչպէս են գրքերը տպում տպարանումը։ Գրքերն ո՞վ է կազմում։ (Կազմարարը։) Նա ինչպէս է կազմում։ Տեսել է՞ք՝ թէ ոչ։ Մեր քաղաքումը [գիւղումը] տպարան կա՞յ՝ թէ ոչ։ Իսկ կազմարար։ Գրաքաճառ ո՞ւմ են ասում։ Գրատունն ինչ է։

Գրչի՞ ինչու համար է։ Գրչով ինչի՞ վերայ ենք գրում։ Գրիչները ինչից են շինում։ (Պողպատից, թռչնոց փետուրներից և եղէգից։) Եղէգից (ղամիշից) շինած գրիչները աւելի՞ որ ազգերն են գործ ածում։ (Պարսիկները և թուրքերը։) Մեր տեղը պողպատէ (երկաթէ) գրիչներ շինումե՞ն՝ թէ ոչ։ Ա՞յդ որտեղ են շինում։ Այստեղ ինչպէս են ծախում մի հատը։ (Կէս կամ մի կոպէկ)։ Ուրեմն հարիւրը կամ մի տուփը ինչ արժէ։ (Կէս կամ մի մանէթ։) Հասարակ գրիչները աւելի՞ որ թռչնոց փետուրներից են շինում։ (Սագի, ղազի։) Մեր տեղը սագեր կա՞ն, թէ ոչ։ Սագի գրիչներն են թանկ՝ թէ երկաթինը։ Հասարակ գրիչը որ փչանայ՝ կարելի՞ է նորան կրկին կտրել կամ ուղղել։ Իսկ եթէ երկաթէ՞ գրիչը փչանայ։

Գինին ինչից են շինում։ Խաղողն ինչ տեղէ դուրս գալի և ինչի վերայ։ Խաղողի ծառին ինչ են ասում։ (Որթ, վազն։) Խաղողն ինչ գոյնի է լինում և ինչ ձևի։ Ողկոյզ (ճութ) ինչին են ասում։ Խաղողն երբ է հասնում։ (Աշունքը։) Խաղողի քաղելու ժամանակին ինչ են ասում։ (Բաղաքաղ։) Պատմեցէ՛ք, տեսնում ինչպէս են բաղերը քաղում և գինի շինում։ Խաղողն ինչի միջումն են մղում։ (Հնձանի։) Մաճար ինչին են ասում։ Մաճարն ինչի մէջն են ածում։ (Կարասների։) Կարասները ինչից են շինում և ինչ ձևի։ Խաղողի չիչ (ճաճա) ինչին են ասում։ Ճաճից

ինչ են շինում կամ քաշում։ (Արաղ։) Տեսել է՞ք ինչպէս են արաղ քաշում, թէ ոչ։ Ո՞վ է կարող պատմել։

Կոնոնը գոյնը ճանաչումէ՞ք՝ թէ ոչ։ Ցոյց տուէք տեսնում կանանչ գոյնով ինչ բաներ կան այստեղ։ Իսկ կարմիր և դեղին գոյնով ինչ բաներ։ Սպիտակ և սև գոյներն էլ ճանաչումէ՞ք՝ թէ ոչ։ Իսկ կապոյտ գոյնը։ Ի՞նչ գոյներ կան քո շորերի վերայ։ Իսկ քո ընկերիդ շորերի վերայ ինչ գոյներ։ Խաղողը, ծիրանը և հանը ինչ գոյնի են լինում։ Իսկ ժամանակը, և ինչ գոյնի՝ հատած։ Ի՞նչ գոյնի մահուդներ ես տեսել կամ կան։ Իսկ կտաւ։ Վարդը ինչ գոյնի է լինում։ Իսկ մանիշակը։ Երկինքը պարզ ժամանակը ինչ գոյն ունի։ (Կապոյտ։) Ձիւնը ինչ գոյն։ Ծառերի տերևները ինչ գոյնի են լինում գարունքը, և ինչ գոյնի աշունքը։ Ասացէք բոլոր գոյները, ինչ որ գիտէք։

Դանակը ինչի համար են շինում։ Ո՞վ է շինում և ինչից։ Դանակի կոթը ինչից են շինում։ Ցոյց տուր դանակի մասունքները և պատմէ՝ թէ ինչի համար է շինած ամէն մի մասը և ինչից։ Բոլոր դանակները մի ձևի են՝ թէ դանդան։ Այդեհատը (դաղատը) ինչ ձևի է լինում։ (Ծայրը կեռ։) Իսկ սեղանի կամ հացի դանակը։ Զմելինը կամ դրչահատը ո՞րն է և ինչ ձևի է լինում։ Բացի դանակը ուրիշ էլ ինչ սրեր ենք գործ ածում։ (Թուր, դաշնակ (խանջալ), կացին, ուրագ, ագռաւ։) Թուրը և խանջալը ինչի համար ենք գործ ածում։ Իսկ կացինը ինչի համար։ Կացինը ո՞վ է շինում և ինչից։ Ուրագը ո՞րն է և ինչի համար ենք գործ ածում։ Իսկ ագռաւը։ Կացինը, ուրագը և ագռաւը ո՞ր արհեստաւորին են միշտ հարկաւոր։

Գ ր ո ւ թ ի ւ ն։

Շարունակեցէ՛ք օրինակել այժմ հինգերորդ համարը։ Նստեցէ՛ք թէ ես ինչպէս եմ գրում այդ տառերը։ Ահա է, ահա է,

և ահա Հ։ Ո՞վ չի մացառ։ Արի տախտակի մօտ և գրէ։ Հ, Գ, Դ, Հ, Դ. Գ։ Գրէ անցեալ դասերը. Բ, Պ, Ռ, Ւ, Ք. Է, Ս, Ֆ, Թ, Շ, Ր, Ի, Ա։

Գրեցէք։ Էս, Էտ, Էշ, Շէ, Ռէ, Ւէս, Գէշ, Պէր, Գէր, Գէռ, Շատ, Գաղ, Գիրք, Գիրս, Գաղ, Գաղ, Գաղ։

Էս գիրս մեր է։ Ես գրում եմ։ Ես գրում եմ։ Գիրս գրիչ է։ Գիրս գրիչ է։



ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՎԵՑԵՐՈՐԴ։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ։

Լ. Բ. Ճ.

Լալ, կալ, գէլ, սէլ, լար, լէն, շալ, շալ, բաղ, բան, բաղ, բեր, բուն, բուրդ, բերդ, ամբ, բարձ, ձի, ձու, ձէն, ձին, լինձ, ձուկն, տանձ, սանձ, գանձ, ձաղ։

Լուսին, լսել, գդալ, լինել, շինել, բերել, կասել, բարակ, բարի, մարդիկ, արաբ, անբան, ունաբ, ձմերուկ, բրինձ, բիձա, բարձր, բանակ, բերան, աներ, աբգար, բագրատ։

բանալի, աբրաամ, աներձաղ, բարեկամ, աբասի, լիքանան։

Ես կամենումեմ ուսանել գրել ու կարդալ լատիներէն։ արտաշէսը արդէն գիտէ գերմաներէն գրել ու կարդալ։ աբգարը չէ իմանում գերմաներէն, իսկ լատիներէն շատ սիրուն գիտէ։ գերմաներէն կարդալ ու գրելը շատ շուտ կարելի է ուսանել։

Ես բարեկամներ շատ ունիմ։ իմ բարեկամները բարի մարդիկ են, չար մարդիկ չեն։ իմ բարեկամների մէկի անունը աբգար է, իսկ մէկէլինը բագրատ։ երկուսն էլ շատ գիտուն մարդիկ են։

բագրատը կենում է իմ բիձու տանը։ իմ բիձէն շատ բարի մարդ է։ նա մի բարձր տուն ունի. էն տանը տասն ու երկու արձակ սենեակներ կան։ էս սենեակներումը շատ մարդիկ են կենում։

մեր բակումը շատ բաղեր կան ու շատ սագեր։ մեր բաղերը ու սագերը շատ ձագեր ունին ու շատ ձու։ ամէն մէկ բաղը

տասն ու երկու սիրուն ձագ ունի։

Ես երկու աքաղաղ ունիմ։ Ես գիտեմ ինչ կանեմ էդ երկու աքաղաղն։ Մի աքաղաղ գըրինչ կգնեմ ու մի աքաղաղ մատիտ։ Ես գրինչ ու մատիտ չունիմ։

Ես շատ երկիրներ եմ տեսել ու շատ քաղաքներ։ Քաղաքումը կենումեն մարդիկ։ Իմ քիանէն տեսել է գերմանիա ու արաբիա։ Արաբիա բնակումեն արաբները։ Արաբները արի մարդիկ են ու ունին սիրուն ձիաներ։

Խ ո ս ա կ ց ո ւ թ ի ւ ն։

Աշխարհիս հոգին միակերպ են, թէ զանազան։ (Զանազան։) Ինչով են զանազանվում։ (Գէմքով, հագուստով, ազգով, լեզուով, հաւատով, ուսումով կամ լուսաւորութիւնով։) Գէմքով ինչպէս են զանազանվում։ (Լինումեն ոպիտակ, թուխ, ու։) Եվ մարդկերանցը ինչ ենք ասում։ (Արաբ)։ Նոցա երկիրը ինչպէս տեղ է՝ տաք թէ ցուրտ։ (Շատ տաք։) Արեգակիցը կարող է մարդս սևանալ՝ թէ ոչ։ Բոլոր մարդիկը մի տեսակ հագուստ ունին, թէ զանազան։ Ի՞նչ տեսակ հագուստներ ես տեսել։ Գիւղացին և քաղաքացին էլ շորերով զանազանվում են՝ թէ ոչ։ Ի՞նչպէս։ Դու ինչ տեսակ շորեր ունիս հագիդ։ Ասա՛ քո շորերի անունները։ Քո շորերը ինչից են շինած կամ կարած։ Ո՞վ է կարել։ Ազգով էլ մարդիկը զանազանվումեն՝ թէ ոչ։ Դու ինչ ազգ ես։ (Հայ։) Ուրիշ էլ ինչ ազգի մարդիկ ես տեսել կամ գիտես։ (Ռուս, թուրք, պարսիկ, վրացի, յոյն (ելլինէն), ասորի,

երրայեցի (Ջհուդ), դաղղիացի (Ֆրանցուզ), անգղիացի (Ինգլիզ), գերմանացի (Նեմից), իտալացի։) Էս բոլոր ազգերը մէկ լեզուով են խօսում՝ թէ զանազան։ Դու ինչ լեզուով ես խօսում։ Ուրիշ էլ ինչ լեզու գիտես։

Բոլոր ազգերը մէկ հաւատ ունին՝ թէ զանազան։ Դու հաւատով ինչ ես։ (Քրիստոնեայ)։ Ուրիշ էլ ինչ քրիստոնեայ ազգեր գիտես։ Քրիստոնեայ ազգերն էլ միմեանցից հաւատով զարձեալ զանազանվում են՝ թէ ոչ։ Այո, զանազանվում են. մենք հաւատով լուսաւորչական ենք, ռուսները և վրացիքը՝ յունադաւան, գերմանացիքը՝ լուտերական կամ պրոտեստանտ, դաղղիացիքը և իտալացիքը՝ կաթոլիկ։ Ո՞ւմ են կոչում քրիստոնեայ։ (Ով որ քրիստոսին հաւատում է։) Թուրքերն ու պարսիկներն էլ Քրիստոսին հաւատում են՝ թէ ոչ։ (Ոչ։) Ուրեմն նոքա քրիստոնեայ են՝ թէ չէ։ Այդ նոքա ինչ են։ (Մահմետական։) Ինչու համար են այդպէս կոչվում։ (Որովհետև նոքա Մահմեդին են հաւատում։) Ջհուդները քրիստոնեայ են՝ թէ մահմետական։ (Ոչ այն, և ոչ այն։) Ջհուդները և մահմետականները աստուածապաշտ են՝ թէ ոչ։ Կան այնպիսի մարդիք, որոնք ճշմարիտ Աստծուն չեն ճանաչում և պաշտում։ (Կան։) Այդ նոքա ինչ են պաշտում։ (Արեգակ, լրակ, հող, ջուր և զանազան կենդանիք։) Այդպիսի մարդկերանցը ինչ ենք ասում։ (Կռապաշտ, հեթանոս։)

Ամէն ազգերն էլ մի տեսակ ուսում կամ լուսաւորութիւն ունին՝ թէ զանազան։ Ո՞ր ազգերն են ամենից լուսաւորեալը։ (Անգղիացիքը, դաղղիացիքը, գերմանացիքը, ռուսները։) Նոքա ինչպէս են լուսաւորվել։ (Գիր կարդալով և ուսում առնելով։) Ուրեմն եթէ մենք էլ գիր կարդանք և ուսում առնենք, կարող ենք նրանց նման լուսաւորեալ՝ այսինքն գիտուն մարդիկ դառնալ, թէ ոչ։ (Կարող ենք)։ Ամենից ազէտ և ցնոր մարդիքը որոնք են։ (Վայրենիքը։) Նրանք ինչպէս են ապրում։ (Անասունների նման։) Նրանց կերակուրը ինչ է։ (Որսի կամ ձկան միս)։ Նոցա

հաղուստը ինչ է։ (Գաղաններին մորթին։) Նոցա զէնքերը ինչից են։ (Սուր քարերից, ոսկորներից և փայտից։) Ինչու չեն երկաթից շինում։ (Որովհետև չգիտեն։) Վայրենիքը կարդին տուն կամ բնակարան ունին՝ թէ ոչ։ (Ո՛չ։) Նոքա աստուածապաշտ են՝ թէ կռապաշտ։ (Կռապաշտ)։

Աշխարհիս ազգերը բոլորը միատեղ խառն են կենում, թէ ջոկ ջոկ։ (Ամէն ազգ իւր համար առանձին երկիր ունի, ինչպէս որ ամէն մարդ իւր համար առանձին տուն։) Բոլոր ազգերը մի թագաւոր ունին, թէ զանազան։ (Ամէն ազգ իւր թագաւորն ունի կամ ունեցել է։) Մենք էլ հայ թագաւոր կամ թագաւորութիւն ունեցել ենք՝ թէ ոչ։ (Այո, ունեցել ենք, և հին ժամանակը մեծ ազգ ենք եղել, բայց այժմ քիչացել ենք և մեր թագաւորութիւնը կորցրել։) Այժմ ո՞վ է մեր թագաւորը։ (Ռուսաց թագաւորն է։) Մեր թագաւորի անունն ինչ է։ Նա ո՞ր քաղաքումն է կենում։ (Պետերբուրգ։) Գաղղիացւոց թագաւորը ո՞ր քաղաքումն է կենում։ (Փարիզ։) Անգղիացւոցը։ (Լոնդոն։) Տաճիկներինը։ (Կոստանդնուպոլիս։) Պարսիկներինը։ (Թէհրան։) Այդ քաղաքները մեզանից հեռո՞ւ են՝ թէ մօտիկ։ (Շատ հեռու են)։ Ոտով մարդը քանի ժամանակումը կարող է գնալ էնտեղ։ (Մի կամ երկու ամսումը, բայց եթէ երկաթէ ճանապարհով գնալու լինի՝ չորս հինգ օրումը կերթայ։) Մի մարդ քանի ժամանակումը կհասնու երկրիս ծայրը, այսինքն քանի ժամանակումը կարող է պտըտիլ երկրիս չորս կողմովը, եթէ օրը գնալու լինի 50 վերստ։ (Երկու տարումը։) Ուրեմն ինչպէս էք կարծում, երկիրս մեծ է՝ թէ փոքր։ (Շատ մեծ է։)

Ա՞ՀԸ մեզ ինչ օգուտ է տալիս։ (Երկիրս ջրումէ և զովացնում և մեզ էլ ամառը շոգից և ձմեռը ցրտից պահպանում։) Առանց ամպի կարո՞ղ է անձրև կամ ձիւն գալ։ (Ոչ։) Ձիւնը ո՞ր ժամանակն է գալի՝ ձմեռը թէ ամառը։ Անձրևը ե՞րբ է գալի։ Իսկ կարկուտը։ Անձրևի գալը դաշտերին ի՞նչ է, թէ օգուտ։ Ի՞նչ օգուտ է։

Իսկ վնաս էլ կարող է տալ՝ թէ ոչ։ Ե՞րբ և ինչ վնաս։ Ձիւնի գալը ինչպէս է դաշտերի համար, վնաս է՝ թէ օգուտ։ Ի՞նչ օգուտ։ Իսկ կարկտի գալը։ Ջրերը երբ են սառչում։ Սառուցը կամ ձիւնը կարելի է պահել մինչև ամառը։ Ի՞նչպէս են պահում։ Սառուցը կամ ձիւնը որ հալվում է, ինչ է դառնում։ Անյոպիսի երկիր էլ կայ, որ տեղ իսկի ձիւն չէ գալի և ջրերն էլ չեն սառչում։ (Կայ։) Իսկ այնպիսի երկիր էլ կայ, որ տեղ ամառ ձմեռ սառուց է և ձիւն։ (Կայ։)

Սէնը (սայլը) ինչի համար են շինում։ Ո՞վ է շինում և ինչից։ Ի՞նչ ձևի են շինում։ Սայլը քանի ակն է ունենում։ Ակները ինչի համար են և ինչ ձև ունին։ Ո՞րն է սայլի լիսեռը (սրունին), ճաղերը, լուծը։ Ամէն տեղ էլ սայլերը միատեսակ են շինում՝ թէ զանազան։ Առանց ակների էլ սայլեր շինումէն, թէ ոչ։ (Շինումեն փոքր սայլեր ձիւնի վերայ մանդալու համար։) Ի՞նչպէս է կոչվում այդպիսի սայլը։ (Սահնակ, սղակ։) Սայլումը ինչ անասուններ են լծում։ Կառքը ինչ է։ Ինչի համար է։

Գ ր ա մ ա տ ի կ ա։

Գրեցէք վերոգրեալ օրինակը և ցոյց տուէք ինձ։ Կարող էք դուք ինքներդ առանց իմ ցոյց տալու գրել։ Ով որ կարողէ, թող գայ գրէ տախտակի վերայ տեսնում։ Գրէ ա, է։ — է այդպէս չես գրում, այսպէս հարկաւոր է գրել։ Գրէ կրկին է, յ, ա։ յ, է, ա, յ։

Գրեցէք։ ՈՒԱ, ԳԷԱ, ԷՈՐ, ԷՈՒՆ, ԷԷՐՏ, ՅԷ, ՅՈՒ, ՊՈՒՆՅ, ԷԷՐԷԱ, ՈՒԷԱ, ՇԻՆԷԱ, ՏՈՒՐԷԷ, ՈՐՈԷ, ՈԷԳՈՒ, ԷՈՐԷԷՈՏ։

Է՝ ՇՈՒ ԷՐԷԷՐՆԷՐ Է՝ ՊԷՈՒԷԱ։ Է՝ ՊԷՈՒԷԱ Է՝ ԳԷՐՏՈՒՆԷՈՒ ՈՒ ՈՐՈԷՈՒ։ ՈՐՈԷՈՒ ԷՆՈՒԷՈՒ-ՏԷՆ ՈՐՈԷՆԷՐԸ։ ՈՐՈԷՆԷՐԸ ՇՈՒ ՈՐԷ ՏՈՒՐԷԷ ԷՆ։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ։

Ք. Թ. Ժ.

Քար, քիթ, քիչ, թիւ, թան, թուրթ, թաղ, թաւք, քուրդ, թուրք, ուրթ, ուժ, կուժ, ժամ, ժանդ, ժիր, մենք։

Քամի, թանաք, քաթան, գութան, երեք, թութակ, թիկունք, ունինք, թարգման, թուն, թուն, քերել, թանձր, էժան, բաժին, ժանտ, բժիշկ։

Ժամանակ, արժանի, թանաքաման, թարգմանիչք, թանկագին։

Մենք երեք տուն ունինք։ Մէկումը տատս է կենում, մէկումը բիձէս, իսկ մէկէլումը մենք ենք բնակում։ Մենք մեր տանը մի ընտիր թութակ ունինք։ Նա շատ սիրուն երգում է։ Մենք ամէնքս լսումենք նրա երգին։

Մեր տանը քսան ու երեք սենեակ կա։ Իմ սենեակս շատ սիրուն և արձակ սենեակ է։

իմ սենեակումը ես շատ գրքեր, տետրակներ ու գրիչներ ունիմ։ իմ գրիչներս երկաթէ գրիչներ են։ ես ունիմ երկու տեսակ թանաք, մէկը կարմիր ու մէկը կանանչ։

էս գիշեր ես պէտք է մի նամակ գրեմ իմ տատին։ իմ տատը քաքու ա բնակում։ արշակ, դու ճրք պէտք է գրես նամակ քո տատին։ իմ տատին ես էս գիշեր չեմ գրել, մի ուրիշ ժամանակ կգրեմ. էս գիշեր ես պէտք է դասերս սերտեմ։ քո տատն ո՞ւր է բնակում։ իմ տատը բնակումէ շուշի։

տիգրան, արի գնանք ժամ, ժամի ժամանակ է, արտաշէսն ու տրդատն էլ գնացին ժամ։ ժամէն կգանք ու մեր դասերը կգրենք ու կսերտենք։

Խ ո ս ա կ ց ո ւ թ ի ւ ն։

Ամէն կենդանի էլ հէր ունի, թէ ոչ։ Քիթը մեզ ինչի է հարկաւոր։ Եթէ մեր քիթը կալնունք, կարող ենք հոտ զգալ։ Աչքերը մեզ ինչի համար են հարկաւոր։ Իսկ ականջները։ Ով որ չէ կարում տեսնել, նրան ինչ են ասում։ (Կոյր, քօր.)։ Իսկ ով որ չէ կարում լսել։ (Խուլ։) Բերանը մեզ ինչի համար է հարկաւոր։ Իսկ լեզուն։ Ով որ չէ կարում խօսել, նրան ինչ են

ասում։ (Համբ, մունջ)։ Մեր ձեռքերը և ոտքերը մեզ ինչի են հարկաւոր։ Ովոր չէ կարում մանգալ, նորան ինչ են ասում։ (Անդամալոյծ)։ Իսկ կնոջ ում են ասում։ Ցոյց տուէք տեսնում որն է ձեր գագաթը, ճակատը, յօնքերը, արտեւանունքը, կզակը, ծնօտը, պռոշները, ունգունքը, քներակները, ծոծրակը, այտերը, շլինքը, ուսերը, կուրծքը, թիկունքը, կողքերը, մէջքը, բազուկները (կռնները), արմունկը, ձեռքերը, մատները, ափը, ծնկները, ոտքերը, կրունկը։ Բազուկն ու ձեռքը մի և նոյն են, թէ զանազանութիւն կայ։ Ի՞նչ զանազանութիւն կայ։ (Բազուկը բոլորն է՝ ուսից սկսած, իսկ ձեռքը միայն նրա ծայրի մասն է։)

Թռչունը ինչ է։ (Թռչուն է։) Տանու թռչուն է, թէ վայրի։ Տեսել էք այդ թռչունը, թէ ոչ։ Ո՞ր թռչնոյ չափ է։ Ի՞նչ գոյն ունի։ Ո՞ր տեղի երկրներումն է նա բնակում։ (Տաք երկրները։) Ի՞նչ յատկութիւն ունի այդ թռչունը, որ միւս թռչունները չունին։ (Մարդոյ պէս խօսումէ)։ Հալալ թռչուն է, թէ հարամ։ Նորան տանը ինչի մէջ են պահում։ Ինչով են կերակրում։ Ուրիշ էլ ինչ վայրի (դրսի) թռչուններ գիտէք։ Վայրենի թռչունները ինչով են կերակրվում։ Թռչունները ինչպէս են շատանում (ձագ հանում)։ Զմեռը վայրենի թռչունները մեզ մօտ են մնում, թէ գնումեն տաք երկիրները։ (Ոմանք մնումեն, և ոմանք գնում։) Ո՞ր թռչուններն են մեզ մօտ մնում ձմեռը։ (Ծտերը, ագռաւները, կաչաղակները, մոչահաւները, կաքաւները, աղաւնիքը։) Իսկ որոնք են գնում տաք երկիրները։ (Ծիծեռնակները, սոխակները, կռունկը։) Ասացէք, որոնք են վայրի թռչուններից հալալ, և որոնք հարամ։ Հալալ ու հարամ ինչին ենք ասում։ Վայրի թռչուններին ինչպէս են որսում։ Ամենից մեծ թռչունը ո՞րն է։ (Զայլամը։) Նորա ձուն ինչի չափ է։ (Երեխի գլխի չափ։) Մեր կողմերը զայլամներ կան, թէ ոչ։ (Ոչ, նոքա միայն տաք երկիրներումն են լինում։) Ամենից գօրեղ և սրատա թռչունը ո՞րն է։ (Արծիւը։) Արծիւը մեծ թռչուն է, թէ փոքր։ (Մեծ։) Արծիւները կարող են երեխայ կամ

գառը թռցնել։ (Կարող են։) Ամենից գեղեցիկ թռչունը հրն է։ (Սիրամարգը։) Ամենից լաւ երգող թռչունը հրն է։ (Սոխակը։) Մեր տեղերը սիրամարգ և սոխակ կան, թէ ոչ։ (Կան։) Սիրամարգը ինչ թռչունի չափ է։ (Հնդուհաւի։ Իսկ սոխակը։ (Ծտի չափ։)

Ձին մեզ ինչ օգուտ է բերում։ Ուրիշ էլ ինչ անասուններ գիտես, որոնք մեզ շատ հարկաւոր են։ Ձիերը ինչ գոյնի են լինում։ Ինչով են կերակրվում։ Ձիու տեսակ անասունները որոնք են։ (Էշն ու ջորին։) Էշն ու ջորին մենք ինչ բանի համար ենք գործ ածում։ Քարոտ տեղերումը էշն է լաւ մանգալի, թէ ձին։ (Էշը։) Ձիերին ինչի համար են նալնում։ Ձիու կամ էշի ոտքերը քանի պճեղ ունին։ (Մի պճղանի են։) Ո՞ր անասուններն են երկու պճղանի։ (Եզը, գոմէշը, ոչխարը, պախրին, այծը, խոզը։) Ձին ու էշը որոճում են, թէ ոչ։ Ո՞ր անասուններն են որոճում։ (Անհասարակ կճղակաւորները։) Ձին ու էշը հալալ կենդանի են՝ թէ հարամ։ Հալալ ու հարամ չորքոտանիքը ինչով են իմացվում։ (Կճղակաւորները ու որոճողները հալալ են, իսկ միւսները հարամ։)

ՏէՆԷԷ (դողը) մեզ ինչից է պատահում։ (Մրսելուց։) Իսկ տաքութիւնը կամ հարինքը։ (Նոյնպէս մրսելուց։) Ի՞նչ պէտք է անէ մարդ, որ չհիւանդանայ։ (Պէտք է իրան պահպանէ մրսելուց, չոգից, չափաւոր ուտէ, քրտնած ժամանակը տառը ջուր չըխմէ, վէր չնկնի կամ մի տեղը չցաւացնէ։) Մեզ էլի ինչ տկարութիւններ են պատահում։ (Դվխացաւ, ատամացաւ, փորացաւ, աչքացաւ, ծաղիկ, կարմրուկ, թոքացաւ։) Այս հիւանդութիւնները կամ ցաւերը կարող են մէկից միւսին անցկենալ՝ թէ ոչ։ (Մի քանիսը կարող են, մի քանիսը ոչ։) Երբոր մարդս հիւանդանումէ, ինչ պէտք է անէ։ (Պէտք է խորհուրդ հարցնէ բժշկին և դեղ ընդունէ։) Դեղերը ինչ տեղ են շինում և ծախում։ (Դեղանոցումը։) Գիւղերումը դեղանոցներ կան, թէ ոչ։ (Ո՛չ։)

Մրսած մարդը կամ տաքութիւն ունեցողը, ինչ պէտք է անէ, որ առողջանայ։ (Պէտք է քրտնի։)

Գ ր ո ւ թ ի ւ ն։

Օրինակեցէք եօթներորդ համարը և ցոյց տուէք ինձ։ Միայն թէ տեսէք, ը այսպէս հարկաւոր է գրել, ծ այսպէս և ֆ այսպէս։

Գրեցէք, ֆոբ, ֆէր, ֆոն, ֆոֆ, ֆոբֆ, ֆոծ, ֆոմ, ֆոնոֆ, ֆոռ, ֆոմֆոն, ֆոռֆոռ, ֆծոն, ֆոծֆն, ֆոմոնոֆ, ֆոնոֆոմոն, ֆոնֆոֆն։

Ֆէր պոնը մի ընդրէր ֆոռֆոֆ ոնֆնոֆ, նա շոտ ոչրոռ էրֆոռՆ. Ֆնոֆ ոՆֆնոֆ չոռՆֆնոֆ նրա էրֆն։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՈՒԹԵՐՈՐԴ։

Ը ն թ ե ր ց ա ն ո ւ թ ի ւ ն։

ա. ո. խ.

ապտ, կապ, կերպ, ասպ, խաչ, խակ, ձախ, ոխ, սոխ, ուխտ, խուլ, սեխ, ոտն, ոգի, ոչ, որբ, որս, ոմն, խունկ, խիտ, խոտ, խորձ։

կապիկ, կոպէկ, պանիր, պարսիկ, որպէս, խնձոր, մէրկ, մարեկ, խարդախ, խաբել, որ-

դի, ոչխար, ոսկի, երկաթ, պեստրոս, ապրիմ, ապերախտ, աշխատասէր, սեպտեմբեր։

Իմ պապս ութսուն տարեկան է։ Նա չէ կարում մեզ գալ. նա միշտ տանն է նստում։ Ես նրան շատ սիրում եմ ու միշտ լսում եմ։

Ես տասը կոպէկ ունիմ, եթէ երկու կոպէկ մնեմ, կմնա ութ կոպէկ։ Տիգրանը ութ կոպէկ ունի, եթէ չորս կոպէկ էլ ստանա, տասն ու երկու կոպէկ կունենա։

Մենք դաշտումը շատ ոչխարներ, ձիաներ ու գոմէշներ ունինք։ Ոչխարները կաթը, պանիր, կարագ ու բուրդ են տալի։

Մեր երկրի սարերումը ոսկի քիչ կա, երկաթ շատ կա։ Ոսկին թանգ է, քան թէ երկաթը։ Երկաթն ու ոսկին շատ պիտանի են։

Մեր երկրումը պարսիկներ շատ կան։ Պարսիկների բուն երկիրը, ուր նրանք բնակուսեն, պարսկաստանն է։ Պարսկաստանը ընդարձակ երկիր է։ Պարսկաստանի երկրումը շատ թանկագին քարեր կան։

Խոսակցություն։

Ոսկին ինչ գոյն ունի։ Իսկ երկաթը։ Արծաթն ինչ գոյնի է լինում։ Իսկ պղինձը։ Ո՞րն է թանկ, ոսկին՝ թէ արծաթը։ Արծաթը՝ թէ պղինձը։ Պղինձը՝ թէ երկաթը։ Ոսկու մխալն ինչ արժէ։ (Երեք մանէթ։) Իսկ արծաթինը։ (Մի ռուբլի։) Մխալը մեծ բան է՝ թէ փոքր։ (Շատ փոքր, մի քանի ցորենի չափ է։) Պղնձի դրուանքէն ինչ արժէ։ (2 կամ 3 ռուբլի արժէ։) Իսկ երկաթինը։ (1 կամ 2 շահի։) Ոսկուց ու արծաթից ինչ բաներ են շինում։ Իսկ պղնձից ու երկաթից։ Պղինձը ու երկաթը ինչ տեղից ենք ստանում։ (Սարերի մէջից։) Իսկ արծաթն ու ոսկին։ (Նմանապէս։) Մեր երկրի սարերումը պղնձի ու երկաթի հանքեր կան՝ թէ ոչ։ Իսկ արծաթի ու ոսկու։ Ո՞վ է տեսել պղնձի կամ երկաթի հանք։ Պղինձը կամ երկաթը սարերի մէջին էլ այդպէս խառակ են լինում ինչպէս տեսնում ենք, թէ ուրիշ կերպ։ (Ուրիշ կերպ, քարի հետ խառը։) Ապա ինչպէս են քարից ջոկում։ (Այրելով ու հալելով։) Ո՞վ է տեսել և ո՞վ կարող է պատմել, թէ ինչպէս են պղնձի կամ երկաթի հանքը գետնի միջից հանում, այրում, հալում և նորանից պղինձը ու երկաթը ջոկում։ Ոսկին էլ պղնձի պէս ուրիշ բաների հետ խառն է լինում, թէ իրանու զլխու։ (Իրանու զըլխու, մանր աւազի պէս։) Ի՞նչպէս են ոսկին հողից կամ աւազից ջոկում։ (Զրողող անելով, այսինքն ջրով լուանալով։) Ոսկու հանքեր շատ ինչ տեղ կան։ Սիբիրի երկրումը։

Մէրէն (անտառը) ինչ է։ Մեր քաղաքի [գիւղի] մօտ մէրի կա՞յ՝ թէ ոչ։ Մէրի ո՞վ է տեսել։ Մէրու մէջն էլ այնպէս խոտակ է, ինչպէս բաղերի մէջը, թէ ոչ։ Մէրու ծառերը տնկո՞վի են, թէ իրանք են դուրս գալի։ Մէրումն էլ պտղատու ծառեր լինո՞ւմեն՝ թէ ոչ։ Ի՞նչ պտղատու ծառեր է՛ք տեսել մէրումը։ Մէրու ծառերի պտուղներն էլ այնպէս քաղցր են ու խոժոռ, ինչպէս բաղերինը, թէ ոչ։ Ի՞նչ պատճառաւ։ Մէրուցը մենք

ինչ օգուտ ունինք։ Այս տանը ինչ բաներ կան փայտից չինած։ Վառելու համար ինչպէս փայտ է հարկաւոր, չոր թէ գէջ։ Մէրուցը ինչպէս են փայտ բերում։ Ինչ տեղ որ մէրի չկայ, մարդիք ինչ են այրում։ (Աթար։) Աթարն ինչից են չինում։

Տեսել էք ինչպէս են արտերը հնձում ու խուրձը կապում։ Արտերը ինչով են հնձում։ (Մանգաղով կամ գերանդով։) Մանգաղն ու գերանդին ինչ ձևի են լինում։ Կարող էք նոցա ձևը տախտակի կամ թղթի վերայ նկարել (քաշել)։ Մանգաղը ու գերանդին ինչից են չինում։ Երբոր արտերը հնձումեն պրծնում՝ խուրձերը ինչ են անում։ (Բերումեն կասելու։) Ինչով են բերում։ Ի՞նչտեղ են կասում։ (Կալումը։) Կալը ինչպէս են չինում։ Ի՞նչպէս են խուրձերը կասում։ Ի՞նչով են կասում։ Ո՞վ է տեսել և ով կարող է պատմել։ Կալը կասելուց յետոյ ինչ են անում։ (Քամումեն։) Ինչու համար։ (Որ ցորենը դարմանից բաժանեն։) Դարմանը ինչ են անում։ (Ածումեն մարագը և ձըմեռը տալիս են անասուններին։) Իսկ ցորենը։ (Չորացնումեն, տանումեն ջաղացը ու աղում։) Ջաղաց տեսել էք՝ թէ ոչ։ Կարող էք պատմել՝ թէ ինչպէս է ջաղացը չինած, և ինչպէս է նա ցորենը աղում։ Բացի ջրի ջաղացը էլի ինչ ջաղացներ են լինում։ (Քամու։) Աղած ցորենին ինչ են ասում։ (Ալիւր։) Ալիւրից ինչ են չինում։ (Հաց։) Պատմեցէք տեսնում ինչպէս են ալիւրից հաց չինում։

Կաղնին ինչ է։ (Կենդանի է։) Ո՞րպիսի կենդանի է։ (Մարդակերպ։) Տեսել էք՝ թէ ոչ։ Կապիկները ո՞րտեղ են կենում։ Տաք երկիրներումը։) Ի՞նչ յատկութիւն ունին։ (Խորամանկ են, բան հասկացող և մարդոյ նմանող։) Նոքա ինչով կերակրվում։ (Պտուղներով։) Կապիկները կարողանումեն ծառի վերայ բարձրանալ, և ծառերի վերայ մեն գալ՝ թէ ոչ։ (Կարողանումեն և շատ արագ, այնպէս որ մի բոպէումը ամենաբարձր ծառի գըլխին են ելանում, մէկ ծառից թռչումեն միւս ծառի վերայ և

երբեմն միմեանցից կախ ընկնելով՝ կամուրջ են չինում մի ծառից միւս ծառը, և միւսները, որոնք աւելի փոքր են կամ տկար՝ նոցա վրայէն անց են կենում։ Այս կերպով նոքա անցանումեն և նեղ գետերը, եթէ նոցա եղերքին ծառեր են լինում։) Կապիկները մի տեսակ են, թէ զանազան։ (Զանազան։) Այն որ տեսակն է, որ մարդոյ շատ նման է, տանը ծառայութիւն է անում, տները աւելում է և հաւաքում, ջուր է թերում, սեղանի վերայ նստում է ու չանգալ զանակով հաց ուտում, գաւաթով ջուր է խմում, մարդոյ պէս շորեր է հագնում, ձեռնավայտով մանէ գալի, միով բանիւ շատով ընտելանում է և աչխատում է մարդկերանց նըմանիլ։ (Այծամարդ, Օրանգուտան։) Նոքա որ երկրներումն են բնակվում։ (Հնդկաստանի մօտ, Բօրնէօ կղզու վերայ։) Ի՛նչ մեծութեան են։ (Մարդոյ չափ։) Այս տեսակ կապիկներից մեր կողմերը ցոյց տալու բերում են՝ թէ ոչ։ (Ոչ։)

Գ ր ո ւ թ ի ւ ն։

Գրեցէ՛ք ութերորդ օրինակը և ցոյց տուէ՛ք ինձ։ Ահա է այսպէս գրեցէ՛ք, պ այսպէս, և ռ այսպէս։

Գրեցէ՛ք։ [illegible]

Ամէն երկրի սարքերում մի՞թէ չկայ [illegible] սարքերը [illegible]։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԻՆՆԵՐՈՐԴ։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ։

Ժ. Հ. Ց. Ղ.

Ժիտ, ժեժ, ժիժ, ժիլ, ժուխ, ժանր, ժունր, ահ, հին, հաց, ցախ, ցեխ, հուր, հինգ, հիմն, խոց, բոց, ցեց, հեց, լաց, թաց, աղ, չաղ, սաղ, բաղ, կաղ, ուղտ։

Ժիծաղ, ժաղիկ, արժաթ, կարծր, ժալել, ժաղել, արհեստ, ցերեկ, կացին, ցորեան, անցորդ, ուղիղ, ուղեղ, կաղին, կաղամբ։

Եկեղեցի, բաղմանչի, հեղեղատ, խեցգետին, ժածանիլ։

Դաշտումը, շատ ժաղիկներ կան. ես մի քանիսի անունները գիտեմ, ինչպէս շուշան, մանիշակ, քրքում, նարդոս։ սարերումը շատ տեսակ քարեր կան. նրանց մի քանի տեսակը շատ թանկագին են, ինչպէս ադամանդ, լալ։ էդ թանկագին քարերը պարսկաստանի սարերումն են լինում, իսկ մեր երկրի սարերումը լինում են թանկագին ու

պիտանի հանքեր, ինչպէս արծաթ, պղինձ, ու երկաթ։

պղնձիցը ու արծաթիցը շատ բաներ են շինում։ արծաթը թանկ է, քան թէ պղինձը, իսկ պղինձը թանկ է, քան թէ երկաթը։

երկաթիցն էլ շատ բաներ են շինում, ինչպէս կացին, դանակ, մեխ, ձիու նալը։ էս բաներըը շինումէ դարբինը դարբնոցումը։

դաշտերումը ցանումեն ցորեն ու գարի։ ցանած դեռնին աստումեն արտ։ երբոր արտերը հասնումեն, հնձումեն մանգաղով ու տանում կաստում կալերումը։ ցորենը աղումեն ու շինում ալիր։ ալրից հունցումեն խըմոր, ու խմորից թխումեն հաց։ հացը թխումեն հնոցումը կամ թոնրումը։

Խ ո ս ա կ ց ո ւ թ ի ւ ն։

Մեր քաղաքումը [գիւղումը] եկեղեցի կայ, թէ ոչ։ Հայոց եկեղեցի է, թէ ուրիշ ազգի։ Քանի՞ եկեղեցի կայ։ Ամէն գիւղումն էլ եկեղեցի լինումէ, թէ ոչ։ Մեր եկեղեցին (ժամը) քարաշէն է, թէ փայտաշէն։ Գմբէթաւո՞ր է, թէ անգմբէթ։ Եկեղեցին ինչի՞ համար է։ Զանգակատունն ինչի՞ համար։ Եկեղեցին ինչո՞վ է զարդարվում մեր տներիցը։ Ո՞րն է եկեղեցւոյ սեղանը, բեմը,

խաչկալը, վարագոյրը, խորանը, դասը, աւազանը։ Եկեղեցւոյ ինչ բաներին ենք ասում՝ աշտանակ, ջահ, կանթեղ, գրակալ. բուրվառ, խնկաաուփ, զգեստ, փիլոն, շուրջառ, ուրար, սաղաւարտ, վակաս, թագ, քշոց, խաչվառ, սկիհ, նշխար, քօղ։ Ո՞յք են եկեղեցւոյ սպասաւորները կամ ծառայողները։ (Դպիրքը, սարկաւագները, քահանայքը, վարդապետները, եպիսկոպոսները և կաթողիկոսը։) Քահանայից և վարդապետաց մեծն ո՞վ է։ (Եպիսկոպոսը։) Իսկ եպիսկոպոսաց մեծը։ (Կաթողիկոսը)։ Կաթողիկոսը ո՞րտեղ է բնակում։ (Էջմիածին։) Ո՞վ է այժմ մեր կաթողիկոսը։ Եպիսկոպոսաց ո՞վ է ձեռնադրում։ (Կաթողիկոսը։) Իսկ քահանայից, վարդապետաց և սարկաւագաց։ (Եպիսկոպոսը) Սարկաւագը կարո՞ղ է պատարագ անել։ (Ոչ։) Իսկ կնունք, պսակ և թաղումն։ (Նոյնպէս ոչ։) Ապա ո՞վ է կարող այդ կարգերը կատարել։ (Քահանայն, վարդապետը, եպիսկոպոսը և կաթողիկոսը։) Մեռոնն ո՞վ է օրհնում։ (Միայն կաթողիկոսը։) Ի՞նչ տեղ են օրհնում։ (Էջմիածին։) Ի՞նչ ոսկեր գիտես, որ մեր եկեղեցին կատարում է։ (Քրիստոսի ծնունդն, ջրօրհնէքը, տեառնընդառաջը, աւետիքը, լուսաւորչու ոսկը, ծաղկազարդը, զատիկը, համբարձումը, հոգեգալուստը, վարդավառը, աստուածածնայ ոսկը, սուրբ խաչը։) Կարո՞ղ ես ասել, թէ երբ են լինում այդ ոսկերը։ Եկեղեցումը ինչ գրքեր են գործ ածում։ (Աւետարան, ճաշոց, շարակն, ժամագիրք, ոսկեցոյց, մաշտոց։)

Աղ ինչ տեղից ենք ստանում։ (Աղահանքներից։) Մեր երկրումը աղահանք կա՞յ, թէ ոչ։ (Կայ։) Ո՞րտեղ է և ինչպէս է կոչվում։ (Երևանայ մօտ է և կոչվումէ Կողբայ աղահանք։ (Աղահանքումը աղն ինչպէս է գոյանում։ (Ցառաջ աղաջուրը գալիս է ժողովվում, յետոյ սառչում է և քարի պէս ամրանում, ուստի և այս տեսակ աղը կոչվումէ քարէ աղ։) Աղը եթէ ջրի մէջ ձգենք, կհալէ՞ թէ ոչ։ Ուրեմն թաց-կամ նամ տեղը կարելի է աղ պահել։ Իսկ եթէ աղը կրակի մէջ ձգենք, ինչ կլինի։ (Կամ-

բանայ։) Հալուած աղը կարելի է ջրից բաժանել, թէ ոչ։ (Կարելի է։) Ի՞նչպէս։ (Աղաջուրը եփելով։) Բացի քարէ աղը, ուրիշ տեսակ էլ աղ կայ, թէ ոչ։ (Կայ։) Ի՞նչպէս է կոչվում։ (Ծովի աղ)։ Ի՞նչ պատճառաւ։ (Որովհետև ծովի աղային ջրիցն է գոյանում։) Մեր գործածած աղը ո՞ր տեսակն է։ (Քարէ աղն է։) Քարէ աղն է լաւ և թանգ, թէ ծովի։ (Քարէ աղը։) Քարէ աղն ինչպէս են ծախում։ (Գրուանքէն մի կամ երկու կոպէկով։) Աղն ինչ ենք անում։ Աղին ու անալին ո՞ր է։ Անաղ հացին ինչ են ասում։ (Բաղարճ։) Անասուններին էլ աղ ուտում են, թէ ոչ։ Ասելի ո՞ր անասունները։

Ո՞ղջ տեսնել էր, թէ ոչ։ Մեծ կենդանի է, թէ փոքր։ Գոմէշն է մեծ, թէ ուղտը։ Ուղտը մեզ ինչ օգուտ է տալի։ Ուղտին ինչպէս են բարձում։ Ուղտի մէջքը միւս անասունների մէջքի նման է, թէ ուրիշ կերպ է։ Ուղտը ինչ է ուտում։ Ուղտը քանի օր կարող է մնալ անջուր։ (Հինգ կամ վեց օր։) Ուղտերին ասելի ինչպէս տեղերումն են բանացնում։ (Աւազուտ և անջուր տեղերը։) Ուղտերին նալնում են՝ թէ ոչ։ Ուղտը կրճղակաւոր է, թէ անկճղակ։ Որոճում է՝ թէ ոչ։ Հալալ կենդանի է՝ թէ հարամ։

Գ ր ա ւ թ ի ւ ն։

Շարունակեցէք գրել այժմ ինքներդ օրինակը։ Ծ այսպէս է հարկաւոր գրել, Հ այսպէս, Ղ այսպէս և Ղ այսպէս։ Ա՞վ չմոռացաք։ Արի գրէ՛ Ծ, Հ, Ղ, Ղ, Հ, Հ, Ծ, Ղ, Ղ, գրէ անցեալ դասերը Ա, Ի, Ը, Ե, Է, Ն, Ո, Ս, Ֆ։

Գրեցէք։ Ծէ՛ն, Ծի՛ա, Ծո՛ւ, Ծա՛ղ, Ղէ՛ն, Հի՛ն, Հա՛ց, Ա՛ղ, Ա՛ղա, Ծա՛ղի՛, Ա՛ղծոլ, Հա՛ցին, Եղէ՛ղ, Հէ՛ղեղա՛, Խէ՛ղճէ՛ն, Խոտա՛նոց։

Պաշտէ՛ք տունը ցանուցէ՛ն ցորէ՛ն ու գարի՛, երբէ՛ք ոչխարը հաւանուցէ՛ն հիւանդ հիւանդ տանէ՛ գաղով ու պանուցէ՛ն էաղուց էաղէ՛ն։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ։

Ջ. Ճ. Ղ. Ռ.

Ջուր, Ջան, Ջահ, Ջեր, Ջոկ, Մէջ, Ճանճ, Կոճ, Լիճ, Գաղ, Հազ, Սազ, Եղն, Զէնք, Ծառ, Սառն, Նուռն, Դուռն, Ձեռն, Չափ։

Առնուլ, Ջանալ, Ընջել, Լրել, Ականջ, Ճիճու, Տաճար, Հանճար. Տղրուկ, Գլիր, Զուռնա, Ամառ, Ձմեռ, Պատճառ, Թռչուն, Կրունկ, Առանց, Ճանաչել, Ճանապարհ, Առուտուր, Զանազան, Ծիծեռնակ։

Ջուրը շատ հարկաւոր է թէ՛ մարդկերանց ու թէ՛ անասունների համար։ Մենք խմումենք աղբուրի կամ գետի Ջուրը։ Լճի Ջուրը մենք չենք խմում, էն պատճառի որ նա դառն է ու աղի։

Ծառերի ու ծաղիկների համար էլ Ջուրը շատ հարկաւոր է։ առանց Ջրի ծառը ու ծաղիկը չեն կարող դուրս գալ ու մեծանալ, կչորանան։

մեր բաղումը շատ ծառեր կան ու զանազան ծաղիկներ։ բաղմանչին ամառը միշտ նրանց չրումէ, որ չըչորանան։

մեր երկրումը շատ գետեր կան ու շատ սառն ու քաղցրահամ աղբուրներ։ գետերի մէջ շատ զանազան ու համեղ ձկներ կան, իսկ աղբուրների մէջ ձկներ չըկան։

անտառներումը շատ զանազան թռչուններ կան, ինչպէս, սոխակ, տատրակ, կաչաղակ։ բացի թռչունները շատ զանազան գազաններ էլ կան, ինչպէս գէլ, արջ, աղուէս, չախալ։

Խ ո ս ա կ ց ո ւ թ ի ւ ն։

Ճանճերը ինչպէս են բազմանում (ծնվում)։ (Ձու են ածում և այդ ձուերից ճանճեր են գոյանում։) Ձուից ինչպէս են ճանճեր գոյանում։ (Ցաւաջ որդունք են գոյանում և յետոյ այդ որդունքը երբոր մեծանում են, կերպարանափոխվում են և դառնում են ճանճ։) Ուրիշ ինչ որդունք գիտէք, որոնք այդպէս կերպարանափոխութիւն են ստանում։ (Շերամի (ապրեշումի) որդը։) Շերամի որդը տեսել էք, թէ ոչ։ Նոքա ինչպէս են գոյանում։ (Նոյնպէս ձուից, որ կոչվում է շերամի սերմը։) Շերամի որդունքը ինչով են կերակրվում։ (Թթան տերևով։) Շերամի որդունքը մարդիկ ինչի համար են պահում։ Այդ որդունքը երբոր մեծանում են, ինչ են դառնում։ (Թիթեռներ, պեպէնակներ։)

Ի՞նչպէս են դառնում։ (Իրանց համար բուն են չինում ապրեշումի թելից, յետոյ քուն են լինում երկար ժամանակ այդ բնի մէջը և դարձնում կնոպարանափոխված, այսինքն թիթեռներ դառած։) Ապրեշումէ թելերը նոցա ո՞վէ տալի։ (Իրանք են չինում գործարարի նման իրանց մէջը և գործ ածում։) Միւս թիթեռներն էլ չիրամի թիթեռների նման որդունքներից են գոյանում, թէ ուրիշ բանից։ (Նոյնպէս որդունքներից։) Ա՛յդպիսի որդունք տեսել է՛ք դաշտերումը խոտերի մէջին, թէ ոչ։ Մեղրաճանճերն էլ հասարակ ճանճերի պէս որդունքներից են գոյանում, թէ ուրիշ բանից։ (Որդունքից։) Մեղրաճանճից մարդիկ ինչ օգուտ ունին։ (Մեղր են ստանում և մոմ։) Մոմն ինչպէս են չինում։ (Մեղրի չիչը տաք ջրի մէջն են ձգում, և մոմը իւղի նման ջրի երեսն է ընկնում ու սառչում։) Ճանճերը ու թիթեռները ձմեռը ապրո՞ւմ են՝ թէ ոչ։ Ո՛չ, ցրտից սատակումեն։) Իսկ մեղրաճանճը։ (Նորան մարդիք տան մէջն են դնում և ցրտից պահում։) Մեղրաճանճերը ձմեռն ինչո՞վ են կերակրվում։ (Մեղրով։) Մեղրը ինչի՞ մէջ են նոքա չինում։ Մեղրաճանճերին մարդիկ ինչի՞ մէջ են պահում։ (Փեթակի։) Փեթակ տեսել է՛ք, թէ ոչ։ Գիտէ՛ք ինչպէս է չինած։

Գրուանդէն ինչ է։ (Չափ է։) Ինչի՞ համար է գործ ածվում։ Մի բանի ծանրութիւնը (քաշը) իմանալու համար։) Գրուանքից մեծ չափերը որո՞նք են։ (Լիտրը, փութը։) Իսկ փոքր չափերը։ (Մսխալ, դրամ։) Մի փութը քանի՞ գրուանքայ ունի։ (40։) Իսկ լիտրը քանի՞։ (9։) Քանի՞ մսխալն է մի գրուանքայ։ (96։) Գիանոցները և գրուանքանոցները ինչի՞ն են չինում և ինչ ձեւի։ Եթէ կամենումենք մի բանի երկայնութիւնը իմանալ և ո՛չ թէ ծանրութիւնը, այն ժամանակը ինչ չափ ենք գործ ածում։ (Մզոն, վերստ, սաժեն, արշին, վերշոկ, գազ, կանգուն, ութ, գիծ,։) Մի մզոնը քանի՞ վերստ ունի։ (7)։ Մի վերստը քանի՞ սաժեն ունի։ (500։) Մի սաժենը քանի՞ արշին ունի։ (3։) արշին տեսել ես թէ ոչ։ Ցոյց տուր ձեռքով տեսնում ինչքա՞ն է։

Մի արշինը քանի վերշոկ ունի։ (16։) Վերշոկը ինչքան է։ (Փոքր մատի (ճկուքի) չափ։) Հեղուկ բաները, այսինքն գինին, արաղը, ձէթը, նաւթը ինչով են չափում։ (Թունգով, վեդրով։) Մի վեդրոն քանի թունգի է։ (3։) Մի թունգին քանի բոթիլ է։ (5։) Իսկ ցորենը, գարին, բրինձը, կորեկը ինչով են չափում։ (Խանով, կօղով։) Մի թաղարը քանի խան է։ (30։) Մի սօմարը քանի թաղար է։ (4։) Մի թաղարը քանի կօղ է։ (7½։) Իսկ սօմարը։ (30։) Մի կօղ ցորենը եթէ քաշենք քանի փութ կգա։ (1։) Ուրեմն մի թաղարը քանի փութ է։ Իսկ սօմարը։ Ամէն տեղ էլ այս չափերն են գործ ածում, թէ ուրիշ։ (Ո՛չ, ամէն երկիր և ամէն տէրութիւն իւր առանձին չափերն ունի։)

Տարին քանի էջոխ ունի Աստ եղանակների անունները կարգով։ Յուրաքանչիւր եղանակը քանի ամիս ունի։ (3։) Գարունը որ ամիսներին է լինում։ Իսկ ոմանք, աշունը և ձմեռը որ ամիսներին։ Երկրագործը, այգեպանը և ոչխարածը ինչ են անում գարունը։ Ամառը ու աշունը ինչ։ Իսկ ձմեռը։ Ձմեռը ոտնու կենդանեացը ինչպէս են կերակրում և ցրտից պահում։ Իսկ վայրի կենդանիքը ինչպէս են ձմեռը իրանց համար ապրուստ ճարում։ (Ոմանք իրանց ձմեռուայ պաշարը ամառն են պատրաստում, ինչպէս մրջիւնները, մեղրաճանճը, մկները, առնէտը, ոմանք ոչինչ չեն ուտում, այլ թմրում են և քնում բոլոր ձմեռը, ինչպէս արջերը, կրիաները, օձերը, ոմանք կարողանում են ձմեռն էլ իրանց համար ապրուստ ճարել, ինչպէս գայլերը, եղջերուները, աղուեսները, նապաստակները։) Բոլոր կենդանիքը առհասարակ տարուայ որ եղանակին են բազմանում (ծնանում) (Գարունքը։)

Գ ր ո ւ թ ի ւ ն։

Օրինակեցէք տասներորդ համարը և ցոյց տուէք ինձ։ Մի-այն թէ նայեցէք, ճ այսպէս է հարկաւոր գրել, Ղ այսպէս, ղ այսպէս և ռ այսպէս։

Գրեցէք Ղ-ղ, Ղ-հ, Ռ-Ղ, ճ-ոնճ, ղ-ի-ճ, ե-ղ-ի, ճ-ռ-ռ, գ-ռ-ռ-ն, ղ-ե-ռ-ս, ռ-ղ-ն-Ղ, գ-ռ-ճ-ռ-ը, գ-ռ-գ-ճ-ռ-ռ։

Ա-գ-ռ-ռ-ն-ե-ր-ռ-մ-ը շատ գ-ռ-ռ-գ-ռ-ն Լ-ռ-ղ-ռ-ն-ն-ե-ր-ը հ-ռ-ն, ի-ն-ղ-գ-ե-ռ ռ-ա-հ-ռ-ռ, գ-ռ-գ-ռ-ռ, հ-ռ-ղ-ռ-ռ, ի-ռ-ղ-ռ-ռ, ի-ռ-ղ-ռ-ռ-ն-ե-ր-ը-ը շատ գ-ռ-ռ-գ-ռ-ն գ-ռ-գ-ռ-ն-ն-ե-ր-ը ե-Ղ հ-ռ-ն, ի-ն-ղ-գ-ե-ռ գ-ե-Ղ, ռ-ը-Ղ, ռ-ղ-ռ-ե-ռ, հ-ռ-հ-ռ-Ղ։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ։

Ի. Վ. Ա. Ֆ.

Ինէտ, Ինոխ, Ինուճ, ով, կով, հով, ծով, նաւ, հաւ, թիւ, եւ, լաւ, վատ, Ինդուք։ Ինակել, Ինոքր, Ինրկիչ, Ինոխանակ, վերին, վարդապետ, վարժապետ, ովկիանոս, բաւական, աւետարան, կտաւ, շաքար։

հագիւ, գաղիւ, հաշիւ, հովիւ, ագնիւ, հիւանդ, աւազակ, գաւազան. նաֆթա, զաֆրան, ֆիրման, մաֆրաշ, ֆրանգ, հրացան։

աշխարհիս երեսին շատ ծովեր կան։ շատ

մեծ ծովին ասումեն ովկիանոս։ Ծովի ջուրը մենք չենք խմում, էնդուր համար որ շատ դառն է եւ աղի։ Ծովի վրէն մարդիկ ման են գալի նաւերով։ Նաւերը շինումեն փէտից եւ ամուր կապումեն երկաթով։

Ծովի մէջ շատ մեծամեծ ձկներ կան, ինչպէս կէտ, դելֆին, սղոցաձուկն։ Էս ձկները վնասակար են փոքր նաւերի կամ նաւակների համար, որովհետեւ կարող են սրտով խփել նաւակին ու շրջել։

Ծովերը ընդունումեն իրանց մէջ շատ մեծամեծ գետեր, ինչպէս տիգրիս, եփրատ, կուր եւ արաքս։ Գետերը գալիս են սարերից կամ բարձր տեղերից, ուր միշտ գալիս է անձրեւ կամ ձուն։ Բարձր սարերի վրի էլած սառուցը կամ ձունը հալվում է եւ դառնում է ջուր։ Էս ջրերը առաջ փոքր առուի պէս վազումեն սարերից ու մէկ մէկի մէջ խառնվելով քիչ քիչ մեծանումեն ու կազմումեն մեն գետ։

Խաղաղություն։

Շուրն ինչից են շինում։ (Շաքարի եղէգից և ճարխալից։) Ի՞նչպէս են շինում։ (Եղէգը կամ ճարխալը մանր կտտրում են, մղում են և նորա ջուրը շատ ելնում, մինչև որ թանձրանում է, յետոյ արիւնով կամ այրած ոսկռով մաքրում են (սպիտակացնում են) և ածում ամանները ու սառցնում) Մեր երկրումը շաքար շինո՞ւմեն՝ թէ ոչ։ Ապա ինչտեղ են շինում։ Շաքարն ինչի համար են գործ ածում։ Շաքարի գրուանքէն ինչպէս են ծախում։ Սառը շաքարը ո՞րն է։ Տեսել է՞ք՝ թէ ոչ։ Սառը շաքարը ինչպէս են շինում։ (Շատ չեն ելնում միւս շաքարի պէս, այլ կիսաւեղի ածումեն ամանները ու սառցնում։)

Ծով տեսել է՞ք՝ թէ ոչ։ Ծովն ինչ է։ Ի՞նչպէս է կարծում, երկրիս երեսին ծովը (ջուրը) է շատ՝ թէ ցամաքը։ (Ծովը երկու անգամ շատ է ցամաքից։) Ծովի վերայ մարդիք կարողանո՞ւմ են մանգալ՝ թէ ոչ։ Ի՞նչպէս են մանգալի։ (Նաւերով։) Նաւն ինչ է։ (Փայտից շինած ամուր տուն։) Նաւի մէջը քանի հոգի կարող է մտնուլ։ (Մեծ նաւերի մէջը կարող են մտնուլ մինչև անգամ մի քանի հազար հոգի։) Ծովի երեսին կարողանո՞ւմ են մարդիկ երկար ժամանակ նաւերով մանգալ։ (Կարողանումեն և մանում են գալի ամիսներով։) Նոցա կերակուրը ինչ տեղից է։ (Նաւերի մէջը ամէն պատրաստութիւն և պաշարեղէն կայ։) Նաւերին ո՞վ է ծովու երեսին մանում ածում (քաշում։) Քամին կամ շոգին, այսինքն եռման ջրի գոլորշին, բուղը։) Այն նաւերը, որոնք եռման ջրի շոգիով են մանգալի, ինչպէս են կոչվում։ (Շոգենաւ։) Ծովի միջումն էլ երկիրներ (ցամաքներ) կա՞ն՝ թէ ոչ։ (Կան։) Նոցա ինչ են ասում։ (Կղզի։) Կղզիների վերայ էլ մարդիկ բնակո՞ւմեն։ (Այո։)

Հրացան (թուանք) տեսել է՞ք՝ թէ ոչ։ Ի՞նչպէս է շինած և ինչից։ Հրացանը ինչի համար են գործ ածում։ Հրացանը ինչով են լցնում և ինչպէս են արձակում (դնում)։ Գնդակը (գուլլեն) ինչից են շինում և ինչ ձևի։ Իսկ վառօղը (բարութը)։

(Ծծումբից բորակից և ածուխից։) Մեր տեղը վառօդ չինում են՝ թէ ոչ։ Թնդանօթը (թօփը) ինչ բան է։ Նա ինչի համար է շինած և ինչից. Թնդանօթները ինչպէս են ման ածում։ Նաւերի մէջ էլ թնդանօթներ լինում են՝ թէ ոչ։ Ինչու համար։

Կապա ինչից են շինում։ (Բամբակից։) Մեր երկրումը բամբակ դուրս է գալի՝ թէ ոչ։ (Այո՛, դուրս է գալի տաք տեղերը։) Բամբակն ինչպէս է դուրս գալի։ (Ցանումեն, և նա թփերի վերայ է դուրս գալի կոկոնների մէջ։) Բամբակից ինչպէս են կտաւ շինում։ (Առաջ բամբակը զզում են, յետոյ մանում են և մանածից կտաւ են գործում։) Բամբակը ինչով են մանում։ Կտաւն ինչպէս են գործում։ Ո՞վ է տեսել, և ով կարող է պատմել։ Կտաւն ինչպէս են ներկում։ Ո՞վ է ներկում։ (Ներկարարը։) Մեր քաղաքումը [գիւղումը] ներկարար կայ՝ թէ ոչ։ Բարակ կտաւից ինչ են շինում։ (Զ[թ։) Ի՞նչպէս են շինում։ (Դաջում են, այսինքն նաշխում են զանազան ներկերով։) Կտաւը մենք ինչի համար ենք գործ ածում։ Իսկ ջիթը։ Մեր տեղը կտաւ շինում՝ թէ ոչ։ Իսկ ջիթ։

Գրաքիւն։

Գրեցէք տասնումէկերորդ օրինակը, և ցոյց տուէք ինձ։ Ի այսպէս հարկաւորէ գրել, Ք այսպէս, Ջ այսպէս և ՝ այսպէս

Գրեցէք։ Փ-ք, Ւ-ջ, Ծ-ձ, Ճ-ռ, Ի-ր, Լ-ս, Ց-ւ, Փ-տ, Ջ-ր՝, Պ-պ, Կ-ջ, Ա-ա, Ֆ-ֆ-ն, Ք-ր-ն, Ք-ա՝ն։

Աշխարհիս երեսին շատ ծառեր Ւ-ն։ Շատ մեծ ծառեր տասնեն ավելի-ն։ Ծառի Լաւը մեծ ճիւղ խմոռ, ճիւղերը հաստ ու շատ պտուղ է նա ունի։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.

Օ. Յ. ՈՅ ԻՒ. ԵԱԼ. ԵԱՆ. ԵՒ.

Մօտ, օր, զօրք, հօր, մօր, օղ, հայ, թէյ, փայ, մայր, հայր, վայ, բայ, այս, այն, այր, օգուտ, օտար, օրէնք, աղօթք, հայրական, մայրենի, արքայ, շղթայ, կրիայ։

Լոյս, յոյս, գոյն, նոյն, սոյն, դոյն, քոյր, թոյն, միոյն, մարդոյն. դև, արև, տերեւ. իւր, հիւր, միւս, իւղ, ճիւղ, հիւղ, գիւղ ձիւն, աղբիւր, թիւր, անկիւն, մեծութիւն, լայնութիւն։

Լեալ, կեալ, ուսեալ, բաղմեալ, մնեալ, եկեալ, համբարձեալ. ատեան, մատեան, աբարատեան, բարութեան, չարութեան։

Ես ունիմ հայր, մայր, քոյր և եղբայր։ Ես ունիմ նոյնպէս հօրեղբայր, մօրեղբայր, հօրաքոյր և մօրաքոյր։

Իմ հօրեղբայրս բնակուէ իւր գիւղումը, այդ գիւղի բնակիչները բոլորը հայ են,

իսկ մօրեղբայրս քաղաքումն է բնակում։ իմ մօրեղբայրը շատ ուսեալ մարդ է։ մենք մեր գիւղումը ունինք մի մեծ այգի։ նոքա երկայնութիւնը երկու հարիւր քայլ է և լայնութիւնը հարիւր։ այդ այգին մեզ տարին տալիս է մինչև հինգ հարիւր թունգի գինի, որոյ մի մասը ծախումենք, իսկ մնացեալը գործ ենք ածում մեր տանը, մանաւանդ հիւր ունեցած ժամանակը։

գինին չինումեն խաղողից։ երբոր խաղողը հասնումէ քաղումեն ածում հնձանի մէջ ու տրորումեն ոտքերով, յետոյ խաղողի ջուրը կամ ասճարը ածումեն կարասները, և երբոր մի ամիս անց է կենում մաճարը դառնումէ գինի։ եթէ ուզումեն կարմիր գինի չինել, սպիտակ գինու մէջ կարասներումը ածում են կարմիր պտուղ կամ ներկ, որով սպիտակ գինին կարմրումէ և դառնում կարմիր գինի։

խաղողը երբոր մզումեն, հընձանի մէջ մնումէ նորա չեչը (ճաճէն)։ ճաճէցը քաշու-

մեն արար մեծ պղնձով, որ կոչվում է արարի պղինձ։

Խոսակցություն։

Թէյն (չայն) մեր երկրումն է դուրս գալի, թէ ուրիշ տեղից են բերում։ Ո՞ր տեղից են բերում։ (Զինացւոց (կիտայի) երկրից։) Ուրիշ երկրներում էլ դուրս է գալի՝ թէ ոչ։ (Ո՛չ։) Զինացւոց երկիրը մեզանից հեռու է՝ թէ մօտիկ։ (Հեռու է։) Մեր երկրիցը դէպի որ կողմն է։ (Արևելեան։) Զայն այնտեղ ինչպէս է դուրս գալի։ (Թփերի, այսինքն փոքր ծառերի վերայ։) Զայն ծառի ինչն է։ (Տերևները։) Տերևներիցը ինչպէս են շինում։ (Տերևները քաղելուց յետոյ լաւ չորացնում են կրակի վերայ երկաթէ ամաններում, և ապա ածումն արկղների մէջ և բերանը փակում, որ հոտը դուրս չգնայ։) Զայն երբ են քաղում։ (Մէկ գարնան սկզբին, այսինքն Մարտին, երբոր նոր տերևները սկըսումն բացուիլ, մէկ էլ Ապրիլին ու Մայիսին, երբոր տերևները արդէն մեծացել են։) Ո՞րն է թանկ և լաւ։ (Առաջինը, այսինքն Մարտի քաղածը, որ շատ թանգ է և միայն թագաւորներն են գործ ածում։) Մեր կողմերը որ տեսակն են բերում ծախելու։ (Ապրիլի և աւելի Մայիսի ժողովածը։) Ինչու համար։ (Որովհետև դրքա արժան են։) Այս տեսակ չայու գրուանքէն ինչպէս են ծախում։ (Ջանազան գնանոց է լինում, մի մանէթից սկսած մինչև 10 մանէթ, կամ աւելի ևս։) Զայն ինչպէս են շինում (եփում), պատմեցէք տեսնում։

Կրէյն ինչ է։ Ո՞րպիսի կենդանի է։ Տեսել էք՝ թէ ոչ։ Նա ինչպէս է մանգալի, ծանր թէ արագ։ Նա ինչով է կերակրվում։ Նա ցամաքի կենդանի է, թէ ջրի։ Էլ ուրիշ ինչ կենդանիք գիտէք, որոնք համ ցամաքի են, համ ջրի։ (Օձը, գորտը կոկորդիլոսը։) Այդ կենդանիքը ինչպէս են բազմանում։ (Ձու ածելով։) Կրիայի ձուն ուտումն՝ թէ ոչ։ (Ուտումն։) Իսկ

հորա մէջը։ (Նոյնպէս։) Ծովի մէջն էլ կրիայ լինումէ թէ ոչ։ (Այո, լինումէ և շատ մեծը, այնպէս որ մէկի վերայ կարող են երեք չորս մարդ նստել։) Ծովի կրիաներին ինչպէս են որսում։ (Երբոր նոքա ծովից դուրս են գալի, որ աւազումը ձու ածեն, այն ժամանակը մարդիք նոցա բռնումեն։)

Համեմատեցէք գէօղ քաղաքի հետ և ասացէք, ինչ նմանութիւն ունին և ինչ զանազանութիւն։ Համեմատեցէք առաջ գիւղի և քաղաքի տները և եկեղեցիքը, յետոյ նոցա փողոցները, մարդիքը, մարդկերանց պարապմունքը և կեանքը, մարդկերանց հագուստը և կրթութիւնը, նոցա որդկերանց կեանքը, դաստիարակութիւնը և այլն։ Համեմատեցէք գիւղացւոց և քաղաքացւոց հարստութիւնը։ Գիւղի մեծին ինչ են ասում։ (Տանուտէր, քօխվայ։) Իսկ քաղաքի մեծին։ (Բազաքապետ։) Գիւղացիքը հարկ (խարջ) տալիս են, թէ ոչ։ Իւրաքանչիւր տունը որքան է տալի։ Իսկ քաղաքացիքը։ (Նոքա էլ են տալի։) Այդ փողերը ինչ են անում։ (Ուսումնարաններ և դատաստանատներ են բացանում ժողովրդի համար, ճանապարհներ են շինում, զօրք են պահում և այլն։) Ո՞վ է այդ հոգսերը քաշում ժողովրդի համար։ (Տէրութիւնը, թագաւորը։)

Գ ր ա մ ա տ ի կ ա։

Օրինակեցէք վերջի համարը և ցոյց տուէք ինձ։ Այս հատուածը հեշտ է, դուք ինքներդ կարող էք գրել առանց իմ ցոյց տալու. եթէ սղալ կլինի ես կուղղեմ։

Գրեցէք։ օր, հօր, հօր, հոգ, հոգ, փոշ, հոյր, հոյր, ոյո, օրոր, ոստ, ոստ, ոստոյ, ոստոյ, ոստոյ, ոստոյ, ոստ, ոստ, ոստ, ոստ, ոստ, ոստ, ոստ, ոստ, ոստ, ոստ, ոստ, ոստ, ոստ, ոստ, ոստ։

Էս ունիմ հոյր, հայր, փոյր և եղբայր։ Էս ունիմ նոյնպէս հօրեղբայր, հօրփոյր և հօրաքոյր։

Ի՞նչ հօրեղբայրս բնակվում է նոր գիւղումը, այդ գիւղի բնակիչները էս-

[illegible] հայ էին. իսկ հրեաները [illegible] էին [illegible]։ իսկ հրեաները [illegible] [illegible] [illegible]։

Մեծ մեր գիտությունը ունենք մի մեծ այգի. նորա երկայնությունը երկու հարյուր տարի է և լայնությունը հարյուր։ այդ այգին մեջ պարքեր պարլիս է մինչև հինգ հարյուր լեռներգի գիներ։ գիներին շինում խաղողից։ խաղողը հանում և տանում ալանները։

ԳԼԽԱԳԻՐՔ։

Ա. Ի. Մ. Շ. Ը. Տ. Կ։

Սրամ, Մարկոս, Շուշան, Իսահակ, Կոմիտաս, Տէր, Աստուած, Ընտիր, Շաբաթ, Մասունք, Կիրակի, Իմաստուն, Ընկեր, Տապանակ, Շարական, Կարապետ, Տիկին։

ԱՐԱՄԸ ՇԱՏ ՄԻԱՄԻՏ ՄՇԱԿ Ա։ ՄԻԱՄԻՏ ՄՇԱԿ ՇԱՏ ԿԱ։

Ր. ՈՒ. Ն. Ե. Դ. Ս։

Ներսէս, Եղնիկ, Դաւիթ, Սահակ, Նիկողայոս, Դանիէլ, Երեմիայ, Յարգիս, Ռաբունի, Ուրար, Եղեմ, Դրախտ, Ուրբաթ։

ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄԸ ՇԱՏ ՍԱՐԵՐ ԿԱՆ։ ՄԱՍԻՍ ՍԱՐԸ ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄՆ Ա։ ԵՍ ՍԻՐՈՒՄԵՄ ՄԵՐ ԵՐԿՐԻ ՍԱՐԵՐԸ ՈՒ ԴԱՇՏԵՐԸ։ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ ՍԻՐՈՒՆ ՍԱՐԵՐ ԵՆ։

Ի. Գ. Զ. Լ. Բ. Ց։

Գարեգին. Լիբանան. Բաբելոն. Զինուական. Գրիգոր. Լուսաւորիչ. Իսկ. Զորեքշաբթի. Զմեռն. Բազուկ. Զորագիւղ. Իսկից։

ԼԻԲԱՆԱՆՈՒ ՍԱՐԸ ԲԱՐՁՐ ՍԱՐ Է։ ԲԱՐՁՐ ՍԱՐԵՐ ՇԱՏ ԿԱՆ։ ԱՐԱԲԻԱ ԲԱՐՁՐ ՍԱՐԵՐ ՉԿԱՆ։

Ք. Թ. Ժ. Ռ. Ո. Խ։

Պետրոս. Խորէն. Թադէոս. Քորեք. Ոմեն. Ժամանակ. Խունկ. Ոսկի. Թագ. Ժանգ. Քար. Պօղոս։

ՄԵՐ ԵՐԿՐԻ ՍԱՐԵՐՈՒՄԸ ՈՍԿԻ ՈՒ ԵՐԿԱԹ ՇԱՏ ԿԱ։ ՈՍԿԻՆ ՉԷ ԺԱՆԳՈՏՈՒՄ, ԻՍԿ ԵՐԿԱԹԸ ԺԱՆԳՈՏՈՒՄ Է։

Ծ. Հ. Ց. Ղ. Չ. Ճ. Ջ։

Ջենոբ, Ղամէք, Չանիկ, Հեթում, Ծաղիկ, Ցամաք, Զրհեղեղ, Զատիկ, Ճանապարհ, Ծով, Հաց, Ճանճ, Ղեկ, Ցեց։

ՄԵՆՔ ԽՄՈՒՄԵՆՔ ԱՂԲԻՒՐԻ ՋՈՒՐԸ։ ԱՂԲԻՒՐԻ ՋՈՒՐԸ ՔԱՂՑՐ Է ԼԻՆՈՒՄ։ ԼՃԻ ՋՈՒՐԸ ՄԵՆՔ ՁԵՆՔ ԽՄՈՒՄ. ԼՃԻ ՋՈՒՐԸ ԱՂԻ Է ԼԻՆՈՒՄ։

Ռ. Փ. Վ. Ֆ. Օ. Յ։

Ռափայէլ. Փրկիչ. Վարդան. Յակոբ. Վասակ. Յովհան. Օձնեցի. Ֆրանգ. Ռոմանոս. Օրորոց. Փորուրար։

ՄԵՐ ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ, ՈՐ ԻՒՐ ՄԱՀՈՒԱՄԲԸ ՄԵԶ ՓՐԿԵՑ ԴԺՈԽՔԻՑ, ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՄԲԸ ՄԵԶ ԿԵԱՆՔ ՊԱՐԳԵՒԵՑԱՑ, ՍՈՎՈՐԵՑՐՈՒՑ ՄԵԶ ԱՅՍ ԱՂՕԹՔԸ, ՈՐ ԿՈՉՎՈՒՄ Է ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ։

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։

Ով Հայր մեր, որ երկնքումն ես, քո անունդ սուրբ լինի. քո արքայութիւնդ գայ. քո կամքդ կատարուի երկրիս վերայ էլ, ինչպէս որ կատարվում է

Զհայ մեր հանապա-
զորդ տուր մեզ այսօր.
և թող մեզ զպարտիս
մեր, որպէս և մեք
թողումք մերոց պարտ-
տապանաց։ Եւ մի տա-
նիր զմեզ 'ի փորձու-
թիւն, այլ փրկեա՛ ըզ-
մեզ 'ի չարէ։ Զի քո է
արքայութիւն և զօ-
րութիւն և փառք յա-
ւիտեանս ամէն։

երկնքումը։ Ամէն օ-
րուան հացներուս այ-
սօր էլ տուր մեզ. և
թող մեզ մեր պարտ-
քերը, ինչպէս որ
մենք էլ թողնումենք
մեզ պարտականներէ
պարտքերը։ Փորձու-
թեան մէջ էլ մի դը-
ձիր մեզ, այլ փրկի՛ր
չարիցը։ Որովհետև
քոնն է արքայութիւնը
զօրութիւնը և փառ-
քը յաւիտեանս ամէն։



2013

4526